ՍԱԹԵՆԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ԻՄ

ԵՎ

ԾԻԱԾԱՆԱԹԵՎ

ՕՂԱՊԱՐԻԿԻ

ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Մի անգամ մեր քաղաքում անց էր կացվում օդապարիկների մրցույթ: Ասեմ՝ իմանաք, որ, ըստ լեգենդի, օդապարիկների հռչակավոր հայտնագործությունը եղել է Ֆրանսիայում, շատ պատահական: Իսկ դուք գիտե՞ք, որ այնտեղ ձգտում են լինել բոլորը: Եվ ահա, շատ տարիներ առաջ Ֆրանսիայում ապրել է Ժոզեֆ Միշել անունով մի մարդ: Այդ Միշելը, որը սիրել է իր կնոջը և նաև շատ ուշադիր է եղել նրա նկատմամբ, մի անգամ...

-Էհ, այո, սիրել է և ուշադիր է եղել,- կասեք դուք,- թե չէ՝ ինչու՞ պետք է այդպես ուշադիր նայեր իր կնոջ փեշերին:

Թույլ տվեք շարունակեմ, և ահա, այդ Ժոզեֆը անչափ ուշադիր նայելիս է եղել իր կնոջ փեշերին, իսկ իր սիրելի պճնամոլ կինը կանգնած է եղել անմիջապես օջախի կողքին: Միշելը նկատել է, թե ինչպես են իր կնոջ փեշերը բարձրանու՜մ... ուռչու՜մ, իսկ երբ կինը հեռանում է կրակից, նրա փեշերն իջնում են, և այդպես շարունակ, փեշերը մեկ բարձրանում, մեկ իջնում են, կախված նրանից, թե որքան է կինը հեռու լինում կրակից:

-Հիասքա~նչ է, սպասի՛ր, սպասի՛ր, - ասում է, իր կնոջն անսահման սիրող ֆրանսիացին, - հապա մոտեցի՛ր ու հեռացի՛ր, հապա էլի՛ մոտեցիր ու հեռացիր... և դա կրկնվում է այնքան, մինչև հասկանում է, որ ինքը հայտնագործություն է արել՝ հնարել է օդապարիկը, որը գունագեղ ու գեղեցիկ է, ինչպես պճնամոլ կնոջ փեշերը: Անկեղծ ասած, ես շատ զարմացա, երբ իմացա, որ առաջին օդագնացները եղել են կենդանիներ. պարզվում է այն ժամանակ մարդիկ վախկոտ են եղել, քանի դեռ չեն փորձել կենդանիների վրա, իրենք չեն նստել: Այն խեղճ, խուճուճ ու գուցե նաև սպիտակ ոչխարին, կարմրատոտ բադին ու կարմրակատար աքլորին նստեցրել են առաջին օդապարիկի զամբյուղի մեջ ու բարձրացրել վեր: Հիմա մտածում եմ, որ նաև գունեղ ընտրություն է կատարվել: Կարմիր թաթերով ու դեղին կտուցով բադ, կարմրակատար ու կանաչ-կապույտ թևերով աքլոր և սպիտակ-սպիտակ, ձյունաճերմակ ոչխար: Դե, իհարկե, ֆրանսիացիներն այլ կերպ չէին էլ կարող, նրանք միշտ էլ սիրել են ճաշակով հագնվել: Փարիզն է, որ աշխարհի նորաձևության մայրաքաղաքն է համարվում: Շարունակեմ իմ պատմությունը: Կենդանիները բարձրացան օդապարիկի զամբյուղ, բայց վախից այնքան ճղճղացին ու միմյանց տրորեցին, որ թագավորը հրամայեց Միշելին. «Վե՛րջ, այլևս չտանջեք այս կենդանիներին, նստեք ինքնե՛րդ»: Կարծես թե շեղվեցի, բայց ոչինչ, այդպես հարկավոր էր, հարկավոր էր հիշել առաջին օդագնացներին:

Եվ, այսպես, բախտի բերմամբ, թե պատահմամբ, մեր քաղաքում անց էր կացվում օդապարիկների շքերթ-մրցույթ: Արծաթագույն, կարմիր ժապավեններով զարդարված, շերտավոր, երփներանգ օդապարիկը կախված էր օդում՝ ինչ-որ պարանից կապված: Նա ասես սպասում էր, թե ով կնստի ու իր հետ կճամփորդի երկնակամարում:

-Ի՜նչ գեղեցիկ է,- բացականչեցի, ապա, առանց երկար-բարակ մտածելու, բարձրացա օդապարիկի զամբյուղ: Չգիտես ինչու, այն ամբողջովին պատրաստ էր անմիջապես վեր բարձրանալու: Ինչպիսի համարձակությամբ սկսեցի, նույնպիսի համարձակությամբ էլ շարունակեցի. քանդեցի օդապարիկը պահող պարանն ու այն առանց դժվարության վեր բարձրացավ: Անգամ չհասցրի մտածել: Հիմա, երբ հիշում եմ, վախենում եմ ու մտածում, որ եթե մտածեի, երբեք չէի քանդի կապող պարանը: Թեթև սահելով՝ այդ գեղեցիկ գունդը բարձրացավ վեր: Քամին հրճվանքով հրում էր գարմանահրաշ գունդն ու ինձ թևերին առած՝ տանում: Օդապարիկն իր մետաքսյա փեշերով այն պճնամոլ ֆրանսուհուն էր հիշեցնում: Երբ անցավ հրճվանքիս պահը, սիրտս սկսեց զգալ բարձրանալու ընթացքն, ու ես սարսափած նայեցի ներքև: Ներքևում խռնվել էին մարդիկ ու ձեռքերով նշաններ էին անում. նրանք ցանկանում էին ինձ հետ պահել իմ մտադրությունից: Իսկ այդպես չի լինում: Հիշեցի հեքիաթի հերոս տղային: Երբ նա թամբում է իր ձին և նստում ու սլանում, նրան ոչ ոք չի կարող կանգնեցնել, անգամ յոթ գլխանի հրեշը: Եվ ես այդ պահին ինձ հերոս տղայի կերպարում պատկերացրի: Քիչ հետո նկատեցի, որ մենակ չեմ բարձրանում: Այն պահից, երբ նստել էի զամբյուղի մեջ, առանց ինձ հարցնելու, զամբյուղի եզրերին շարվել էին աղավնիները: Նրանք ղունղունում էին ու խոսում ինձ հետ: Սկզբում չնկատելու էի տալիս, և չէի լսում նրանց. չէ՞ որ միտքս զբաղված էր, բայց երբ արդեն օդապարիկը վերևում էր, որոշեցի պատասխանել աղավնիների հարցերին. նրանք, մեկը մյուսին հերթ չտալով, խոսում էին, այսպես ասած, կտցին ու լեզվին էին տալիս, դե, ես էլ որոշեցի անքաղաքավարի չլինել:

-Ղու՜ն-ղու՜ն, ղու՜ն-ղու՜ն…

-Հը՞, ի՞նչ է պատահել, որ եկել հավաքվել եք:

-Ինչ է, դու չգիտե՞ս, որ խաղաղության մրցույթ է:

-Ի՞նչ խաղաղության մրցույթ:

-Ինչպե՞ս, դու չգիտե՞ս, որ այս օդապարիկը մասնակցում է խաղաղության մրցույթին:

-Ո՛չ: Իսկ դուք որտեղի՞ց գիտեք, - զարմացած հարցրի նրանց:

Ու մտածեցի՝ այ քեզ ժամանակնե՜ր, անգամ աղավնիներն են տեղեկացված:

-Գիտենք, որովհետև մեզ մի քանի ամիս պահել են այս օրվա համար, հետո բոլորիս բերել ու բաց են թողել այստեղ, ստեղծելով տոնական տրամադրություն:

-Ինչու՞ անգամ աղավնիները գիտեն, իսկ ես ոչինչ չգիտեմ, մի՞թե այդքան անտարբեր եմ խաղաղության նկատմամբ:

-Մենք խաղաղության խորհրդանիշներն ենք, - շարունակեցին աղավնիները:

-Գիտեմ, գիտեմ, ինչ է, մտածում եք դա՞ էլ չգիտեմ:

-Մենք դեմ ենք բոլոր տեսակի պատերազմներին:

-Մենք խաղաղության կողմնակիցներ ենք:

-Լավ, լավ, հասկացա, ես էլ կողմնակից եմ և միանում եմ ձեզ, - ընդհատեցի նրանց, թե չէ բառ չէին թողնի ասելու:

-Շատ լավ է: Շա՛տ լավ: Շա՛տ լավ է:

Աղավնիները թևածեցին շուրջս՝ շարունակելով շաղակրատել... Նրանք պտույտներ էին գործում, վեր տնկում հովհարաձև պոչերն ու թփթփացնում թևերով: Նրանց աղմուկն ու աշխուժությունն այնքան բուռն էր, որ ակամա տրվել էի նրանց ցնծությանն ու ինքնամոռաց բարձրանում էի: Իսկ երբ նկատեցի բարձրությունը, բացականչեցի.

- Չէ~, լավ է, որ եկել եք: Մենակ չեմ լինի երկնագույն անսահմանության մեջ: Աղավնիների ներկայությունն, իրոք, մեղմում էր երկյուղս, թև տալիս մտքիս:

Իսկ աղավնիները շարունակում էին հարցերի տարափը: Ահա, մեկն ինձ հարցնում է.

-Այս ու՞ր, մենք էլ ենք գալիս:

Մյուսը թե.

-Մի՞թե թռչել գիտես, որ բարձրանում ես երկինք, չէ՞ որ երկնակամարում միայն թռչուններն են թևածում:

-Իսկ ու՞ր են քո թևերը: Մի անգամ ճերմակ, գանգուր կատարիկով աղավնին վիրավորել էր թևը. նրան քարով հարվածել էր չարաճճի տղաներից մեկը, և աղավնին չէր կարողանում թռչել: Այնպես որ, եթե թևեր չունենաս, չես կարող թռչել:

-Գուցե դու միանա՞ս մեր խմբին, և միասին պտույտներ տանք երկնակամարում: Գծանկարներ կանենք երկնքում, իսկ մարդիկ ներքևում կհիանան մեզանով:

-Չէ՛, ի՞նչ եք ասում, ես թռչուն չեմ, - ասացի, - տեսնում եմ՝ բոլորդ էլ խոսել գիտեք, մնում է, որ միմյանց հասկանանք: Այ, իսկ դուք, սիրելի ընթերցող, հիմա ծիծաղում եք ինձ վրա. - «Հա՛-հա՛-հա՛... աղավնիները չե՞ն խոսում»: Այդ ձեր աղավնիները չեն խոսում, իմ աղավնիներն ինձ հետ խոսում են: Չէ, չէ մի, կասեք, մեր բակի Սամվելն էլ էր աղավնի պահում, ամբողջ օրը սուլում ու նայու՛մ էր, թե ինչպե՞ս են թռչում, նստում տանիքներին, հապա ինչու՞ չէին խոսում՝ կասեք ու կպատճառաբանեք դուք... Չէ՛ խոսում էին, եթե չխոսեին, նա օրերով ու ժամերով չէր հետևի նրանց թռիչքին ու չէր հիանա: Վա՜յ, այս ի~նչ արեցի, խոսքով ընկա, ու օդապարիկս քանի՜ տարա՛վ... Ներքևում մարդիկ չէին երևում, իսկ կամակոր քամին ավելի էր արագացել և հրում ու հրում էր ինձ՝ զամբյուղիս հետ միասին: Հանկարծ գլխի ընկա, չէ՞ որ ես որոշել էի ճամփորդել, այ հենց հիմա ունեմ այդ հնարավորությունը, իհարկե, էլ չեմ ասում, որ իմ՝ ամենուր քիթս խոթելու բնավորությամբ, օգնեցի այդ հնարավորությունն արագացնելու հնարավորությանը: Միտքս անընդհատ գնում է

այլ մտքի հետևից, հիմա, հիմա կասեմ ասելիքս, ուրեմն ասելիքս այս է, չէ՞ որ ես շատ էի ցանկանում տեսնել նաև Անին: Ուրեմն, ահա և եկել է այդ ժամանակը: Նայեցի շուրջս. դիմացս ղեկանման հարմարանք կար, և ես առանց հապաղելու թեքեցի ու պտտեցի այդ ղեկը: Այսինքն ես, ինչպես առագաստն են ղեկավարում քամու ուղղությամբ և հակառակը, սկսեցի օդապարիկն ինքս պտտել, իսկ քամին օգնում էր, որ այն առաջ ընթանա: Ես լսել էի, որ Անին երևում է մեր գեղեցիկ քաղաք Գյումրիից: Մինչ կնշմարվեին Անիի եկեղեցիները, մտովի պատկերացրի, թե ինչ հոյակերտ քաղաք է եղել. նրա փողոցներում քայլել են գեղեցկուհի հայուհիները, արհեստավորներն աշխատել են, առևտրականները՝ վաճառել ապրանքներ, դարբինները պայտեր ու դարպասներ են ձուլել, թրեր կռել, զարդանախշով ու հյուսկեն դարպասներով զարդարել տները, իսկ քարտաշները քանդակել ու քանդակել են՝ եկեղեցի առ եկեղեցի, հյուսել ու զարդաքանդակներով են պատել խաչքարերը: Թագավորները թագադրվել են, ժողովուրդը ծյուղերով դիմավորել ու ուրախության բացականչություններով ընդունել է իր թագավորին: Հազար ու մի եկեղեցիների քաղաք...

ԵՐԲ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՍ, ԾՆՎՈՒՄ Է ՀՐԱՇՔԸ

Ահա~, ահա~, արևի ճաճանչների մեջ, ինչպես արծաթազօծ գոտի, երևում է գետը, կարծես թե մոտենում եմ, մի՞թե այն պետությունը, որի տարածքում գտնվում է մեր չքնաղ Անի քաղաքը, կտեսնի և կարգելի իմ օդապարիկին՝ հասնել քաղաքի ավերակներին: Գուցե ասեմ կախարդական բառեր, հրաշքի ամենաիսկական պահն է սա...

-Արմա...անամ... միմիա... դեն..., - ահա, հիմա սպասենք մի փոքր... ուռա՜ա՜, օդապարիկն անցավ գետը, մոտենում եմ քաղաքին, սահում դեպի Անի: Ոչ ոք չի արգելի ու չի խանգարի, նրանք չեն տեսնում: Անհավանական է: Տեսնելով Անիի եկեղեցիները՝ հասկացա, որ ժամանակի դարպասները բացվել են, և ես հայտնվել եմ անցյալում: Այո, ժամանակի չափումները փոխվել են, և մենք մտել ենք ժամանակի դարպասից ներս: Ահա, մոտենում ենք պարիսպներին. նրանք ձգվում են ու շրջապատում ողջ տարածքը: Անցնելով պարիսպը՝ օդապարիկն իջնում է Անիի հրապարակում: Անեցիները մի պահ ապշած ու վախեցած կանգնել էին, ապա հաղթահարելով առաջին տպավորությունը, միանգամից խռնվեցին վերևից իջած մարդու շուրջը. նրանք և՛ զարմացած են, և՛ հիացած, և՛ ուրախացած, և բոլորը միասին քաշքշում ու հպվում են ինձ մատների ծայրերով: Իմ հագուստը տարբերվում էր նրանց հագուստից՝ ջինսե տաբատ ու սպորտային կոշիկներ, կարճ կտրված մազեր: Նրանց համար անսովոր ու զարմանալի էր, այդ բոլորին գումարած և՝ օդապարիկը: Քիչ անց նրանց մեջ հայտնվեցին զինված մարդիկ, որոնք հրելով բոլորին, ազատեցին ինձ և առաջարկեցին գնալ թագավորի մոտ: Ահա, նրանք ինձ ուղեկցում են թագավորական պալատ, իսկ այժմ ես եմ ապշած, ավելի քան իրենք. հիացած նայում էի պալատի պատերի որմնանկարներին, սյուների զարդաքանդակներին, լուսազարդ, պերճ գոտիներին: Վերջապես մտանք այն սրահ,

որտեղ գահն էր, իսկ գահին բազմած էր ինքը թագավորը: Բոլորը խոնարհվեցին, ես էլ խոնարհվեցի հայոց մեծ արքայի առջև:
-Ձերդ վեհափառություն, - ասաց ինձ ուղեկցող զինվորը, - այլաշխարհից մեզ հյուր է եկել այս օտարականը, նա իջել է մեզ անհայտ, մետաքսյա հրաշք սարքից:

-Ողջու~յն քեզ, օտարական, ո՞րն է քո գալու նպատակը, - հարգանքով ինձ դիմեց արքան:

-Ծանապարհորդելը, - նույնպիսի հարգանքով պատասխանեցի նրան:

-Իսկ ո՞ր երկրից ես ժամանել: Ասում են՝ դու եկել ես մի սարքով, որն անծանոթ է իմ հպատակներին:

-Դա այնքան էլ բարդ սարք չէ. մետաքսե կտոր է, որը փքվում է և օդ բարձրանում տաք օդի շնորհիվ:

-Իսկ որտեղի՞ց ես, գուցե ծայր հյուսիսից, թե՞ արևելքից: Մենք այնքան էլ լավ չենք ընդունում արևելքցիներին: Նրանք կռվասեր են:

-Այո՛, նրանք չեն փոխվել: Ո՛չ, արևելքցի չեմ: Թեև կոչվում է Արևելյան Հայաստան:

-Հայաստա՞ն:

-Այո՛, Հայաստանն է իմ երկիրը: Նա այն փոքրիկ տարածությունն է, որը մեզ է հասել դարերով մղած պայքարից հետո:

-Հայաստանն ի՛մ երկիրն է: Եվ այն փոքրիկ չէ:

-Այո՛, ձեր երկիրն է, բայց և իմ երկիրն է, ես ապրում եմ քսանմեկերորդ դարում: Իմ Հայաստանը քսանմեկերորդ դարինն է:

-Ես կամ չեմ հասկանում քեզ, կամ դու հնարում ես:

-Ես պատմում եմ այն, ինչ տեսել եմ իմ ծննդյան օրից: Շա~տ է փոքրացել ձեր երկիրը: Այլևս ծովից ծով չէ:

Արքան մի պահ լռեց, երևում էր, որ մտքերի մեջ ընկավ, բայց խոսքը փոխեց և ասաց.

-Մենք սովորույթ ունենք մեր հյուրերին ընծաներ տալու: Համոզված եմ, որ կընդունես այն:

-Կներեք, որ ինքս դատարկաձեռն եմ եկել և ընծաներ չեմ բերել: Ես չգիտեի, որ կհյուրընկալվեմ ձեր պալատում:

Արքան հրամայեց ինձ նվերներ տալ: Հպատակներն անմիջապես իրար խառնվեցին: Արքան շարունակեց զրույցը: Որոշ ժամանակ անց նրանց գլխավորող պալատականը վերադարձավ և հայտնեց թագավորին, որ հրամանը կատարված է:

Թագավորը լսեց, հետո որոշեց, որ պետք է շարունակի հետաքրքրվել այն աշխարհով, որտեղից եկել եմ:

-Ինչո՞վ է տարբերվում քո ժամանակը մեր ժամանակից,- զարմացած հարցրեց արքան:

Անկեղծ ասած, արքայի հայացքում և՛ հետաքրքրություն կար, և՛ դժգոհություն: Նա չէր հաշտվում այն մտքի հետ, որ ինքը լինելով արքա, ինչ-որ մի հասարակ, գուցե գեղջուկ մեկը եկել ու նրան պատմում է, զարմացնում է, և բացի այդ, ոչ մի ապացույց էլ չունի, բացի այն սարքից, որով եկել է:

-Զարգացած է գիտությունը, չկան արքաներ. Մենք ունենք մի պետություն, որի տերը ժողովուրդն է: Ունենք ազգային ժողով, որտեղ ընտրվում են հասարակ մարդիկ: -Եվ միաժամանակ մտածեցի, թե այդ «հասարակ» մարդիկ ինչ կալվածքներ ու գործարաններ ունեն, ոչ պակաս թագավորի ունեցածից, բայց լռեցի այդ մասին, ինչ որ է, մեր ժամանակի մարդն ազատ է: Այո, կարևոր է, որ մեր ժամանակի մարդն ազատ է և ունի իր սեփական պետությունը:

Երբ պատմեցի իմ երկրի մասին, արքան զարմացավ, նա որոշեց, որ եթե ես պատմում եմ ապագայի մասին, ուրեմն գուշակ եմ:

-Մի՞թե դու գուշակ ես, որ կարողանում ես խոսել ապագայի պետության մասին,- հարցրեց արքան:

-Ես չեմ ապրում ձեր ժամանակում, ես պատմում եմ այն, ինչ տեսել եմ իմ ժամանակում, - պատասխանեցի նրան, - չէ՞ որ քսանմեկերորդ դարի ծնունդ եմ:

-Դու խառնեցիր իմ բոլոր մտքերը. մեր ժամանակում, ձեր ժամանակում. այդպես չի լինում: Վերջ: Այն, ինչ դու պատմում ես, հեքիաթ է, կամ թե խարդախություն: Եթե քո ասածներում ճշմարտություն լիներ, ապա դրա մասին կիմանային իմ իմաստուններն ու խորհրդականները: Եվ, բացի այդ, ինքս էլ ՝ամենաիմաստուն արքան եմ: Ի՞նչ է նշանակում՝ իմ ժամանակում կա մի ուրիշ ժամանակ, և ես դրա մասին ոչինչ չգիտեմ: Իմ թագավորության մեջ կա մի ուրիշ թագավորություն, որն իմ թագավորությունից փոքր է, բայց և՝ նույն թագավորությունն է, ղեկավարները ոչ ազնվատոհմ, հասարակ ծագումով մարդիկ են, իսկ ես դրա մասին չգիտեմ: Այստեղ միայն ես եմ թագավոր: Ե՛ս եմ արքան Անի թագավորության: Վե՛րջ:
Հասկացա, որ արքան ամենևին չի հավատում իմ պատմածին: Նրա կարծիքով, եթե գուշակ չեմ, ուրեմն՝ խաբեբա եմ, ուրեմն՝ հարկավոր է բռնել ու նետել զնդանը:
-Ապացուցի՛ր, որ դու եկել ես ապագայից, իսկ եթե չապացուցես, ուրեմն, որպես խաբեբա՝ կհայտնվես բանտում:

-Բայց ինչպե՞ս ապացուցեմ, որ խարդախ ու խաբեբա չեմ: Իմ ունեցածը միայն օդապարիկն է, որի ոչ մեխանիզմը, ոչ էլ աշխատելու ձևը չգիտեմ: Ես գիտնական չեմ. այո, ես հնարող եմ, գուցե նաև խաբեբա, բայց ոչ վնասակար, այլ միայն հնարող:

Մտածեցի, մտածեցի և հասկացա, որ անհնար է ապացուցել...

Այո՛, օդապարիկը հրաշք է նրանց համար, այո՛, իմ հագուստները նորություն են նրանց համար, բայց ինչպե՞ս բացատրեմ նրանց, թե ինչպես է քանդվել Անին, և այսօր այն Հայաստանի սահմանում չէ: Որ Անիին դավաճանել ու լքել են, թալանել ու զավթել են հրոսակները...

Այդ ամբողջը բացատրելու փոխարեն, մտքումս կախարդական խոսքեր շշնջացի ու միանգամից հայտնվեցի իմ օդապարիկում: Զամբյուղի անկյունում ինձ էին սպա..ում արքայի նվերները: Զարմացած էի: Որպիսի~ արագությամբ էին ի կատար ածել արքայի հրամանը. իսկ եթե հանկարծ նույնպիսի արագությամբ էլ իրագործեին ինձ գնդակահարելու հրամա՞նը...

-Ա՜... ա՜...

ԱՐՔԱՅԻ ՆՎԵՐԸ

Օդապարիկը սլանում էր քամու թևին համընթաց, իսկ ես վախից արագացած շնչառությամբ նայում էի, թե ինչպես եմ հեռանում անձիս համար այդքան վտանգավոր պալատից: Երբ հանդարտվեցի, լռության մեջ, զամբյուղում լսվեց ինչ-որ ձայն, որն անընդհատ կրկնվում էր, սկզբում այնքան ցածր, որ ուշադրություն չէի դարձնում, իսկ քիչ-քիչ այն ավելի բարձր դարձավ, և հետո քիչ անց, ինքս էլ հանգիստ էի՝ ուշադիր, կարողանում էի տարբերել ձայները: Եվ ահա, ականջ դրեցի: Այո՛, չէի սխալվում, արկղիկներից մեկը ձայն էր արձակում: Արագորեն քանդեցի արկղիկի մետաքսյա ժապավենը: Նրա մեջ նստած՝ տխուր մլավում էր ճերմակ ու փոքրիկ Վանա կատուն: Նա վախեցած ու խնդրող հայացքով ինձ նայեց: Ես գիտեի, որ Վանա կատուներն ունեն տարբեր գույնի աչքեր և տեսնելուց հետո ոչ թե զարմացա, այլ հիացա իմ տեսածով: Հասկացա, որ արքան ինձ էր նվիրել ամենաթանկարժեք նվերներից մեկը՝ վզին մետաքսյա ժապավեն կապած, փոքրիկ արարած, որը մեր Վանա լիճն է հիշեցնում: Այլևս միայնակ չեմ լինի: Սակայն, դեռ նոր էի ընտելանում ընկերոջ ներկայության, երբ նա խոսեց.

-Ես Վանա տառեխ եմ սիրում:

-Ես էլ շոկոլադ եմ սիրում, - ասացի նրան:

-Բայց այն արկղի մեջ տառեխ կա, բաց արա և ի՛նձ տուր, - պահանջեց կատուն:

-Իսկ ո՞վ է տեսել, որ կատուները խոսեն և դեռ ուտելիք էլ պահանջեն, - բողոքեցի ես: Մեկը լինի, որից ես պահանջեմ:

-Ես խոսում եմ, - մրթմրթաց կատուն:

Անկեղծ ասած, մոռացել էի, որ հեքիաթն ինքս եմ հնարել, և ինքս էլ կառուցում եմ ընթացքը: Միայն թե երբեմն հնարանքն առաջ է ընկնում: Ուրեմն գուցե շա... եմ երազել Վանա կատու ունենալու մասին, և ահա կատարվել է և այդ երազանքը:

-Լավ, ինչպես կցանկանաս, միևնույն է, քիչ հետո ինքս եմ քեզ համար կեր փնտրելու, ավելի լավ է բացեմ արկղիկը, - համաձայնեցի ու մտածեցի. «Թող քո ասածը լինի»:

-Շատ հոգատար արքա էր, թե ինչու բարկացավ ինձ վրա, չեմ հասկանում, - բարձրաձայն ասացի կատվին: Եվ անմիջապես էլ հասկացա, որ ընդունեցի նրա ընկերությունն ու սկսեցի խոսել հետը:

Կատուն թռթվեց ուսերն ու զարմացած նայեց երեսիս: Նա հասկանում էր իմ խոսքը:

ԱՆՁՐԵՎ Է ԳԱԼՈՒ

Օդապարիկը դանդաղ շարունակեց ընթացքը: Տակավին նոր էինք շարժվել, երբ երկնքում երևացին պարող գորտեր:

-Նայի՛ր, նայի՛ր, գորտերը երկնքում պարում են: Արդյոք, կարո՞ղ են գորտերը թռչել, բարձրանալ երկինք, և բարձրանալն էլ բավարար չէ, նաև պարում են: Գիտե՞ս ինչ, հիշեցի. մայրս ասում էր՝ եթե գորտը պարի ու կռկռա, ուրեմն՝ անձրև է գալու:

-Մյաու~... Իսկ ամպը զարմացած լռում է: Մի՞թե գորտերը կարողանում են թռչել... - Ինչու՞ ես ժպտում, - հարցրեց Վանը:

-Դե, մտածում եմ՝ հիմա ամպն է ճահճում կռռալու: Չէ՞ որ գորտերը բարձրացել և գրավել են ամպերի տեղը, - պատասխանեցի, և հասկացա, որ նոր ընկերոջս նաև անուն եմ դրել՝ Վան:

-Վան, այո՝ Վան: Քո անունը Վան կլինի: Դու համաձա՞յն ես այդ անվան հետ, - հարցրեցի կատվին:

-Իսկ ես արդեն գիտեի, որ դու ինձ Վան ես կոչել, - իմաստունի պես պատասխանեց Վանը:

-Դու ի՛նչ է, մտքե՞ր ես կարդում: Հասկացանք, խելացի ես, բայց մտքեր կարդալու համար հարկավոր է պայծառատես լինել, - բողոքելով բացատրեցի մարդկային հատկություններով օժտված կատվին:

-Ես այդպես եմ ծնվել:

-Իսկ ինչու՞ են քո աչքերը տարբեր գույնի, - քիչ լռելուց հետո հարցրի նրան: Չէ՞ որ նա իմ ընկերն է արդեն, և ես հանգիստ կարող եմ ուզածս հարցը տալ:

-Ի՞նչ իմանամ, - թաթը թափ տվեց կատուն: -Իմ մայրն էլ այսպիսին էր, ասում են՝ իմ տատն ու պապն էլ այսպիսին են եղել:

-Տարօրինակ է, առաջին անգամ եմ տեսնում, որ նույն դեմքի վրա աչքերը տարբեր լինեն. իմ տեսած բոլոր կատուներն ունեն միևնույն գույնի աչքեր:

-Մըռռ… Մըռռ… - մռլտաց կատուն և ինքնահավան ձայնով շարունակեց, - մենք այդ կատուներին արհամարհում ենք: Ինձ մոտ դրանց մասին չխոսես: Եվ բոլոր նրանք, որ պատկանում են մեր ցեղատեսակին, արհամարհում են նրանց:

-Լավ, լավ, առանց բարկանալու: Երբ կատուները բարկանում են, նաև ճանկռոտում են:

-Մըռռ… մըռռ…

-Բայց դուք բոլորդ էլ նման եք միմյանց, միանման մլավում եք ու մռռացնում, միանման ճանկռոտում, միանման ծուկ ուտում, - սակայն այն, ինչ հիմա մտածեցի ու ձեզ ասացի՝ բարձր չասացի, այն մնաց իմ մտքում, իսկ դուք այն կարդացիք ու ինձ կհասկանաք: Ես չէի ցանկանում վիրավորել իմ վեհանձն ընկերոջ զգացումները, մենք նոր էինք ընկերանում: Մի քանի վայրկյան երկուսս էլ լուռ էինք, յուրաքանչյուրս մտորում էր առանձին: Չգիտեմ, թե ի՞նչ էր մտածում նոր ընկերս, բայց հիշելով արքային՝ փորձեցի հավատալ, որ ժամանակ հասկացություն գոյություն չունի:

-Կարծում եմ՝ ճիշտ է, որ ժամանակ հասկացություն գոյություն չունի, - բարձրաձայն արտահայտեցի միտքս:

-Վերջապես ընդունեցիր, - խոսքս կտրեց Վանը:

-Այդ մենք՝ մարդ արարածներս ենք մեզ համար չափումներ ստեղծել, - շարունակեցի միտքս:

-Ես իններորդ չափումից եմ, կարողացիր դու էլ հասնել, - պարծեցավ Վանը:

-Մենք ստեղծել ու կանոնավորել ենք ժամանակը:

-Իրականում անցյալ գոյություն չունի, ահա ես քեզ ապացույց, չէ՞ որ անցյալից եմ, - միջամտեց Վանը:

-Անցյալ գոյություն չունի, ապագան դեռ առջևում է՝ չի եկել, իսկ այն, որը չի եկել, ուրեմն և՝ գոյություն չունի:

-Մը~ռռ, մը~ռռ, - հաստատում էր Վանը:

-Մնաց ներկան: Իսկ ներկա՞ն…

-Ներկան ակնթարթն է:

-Իսկ ներկան այն ակնթարթն է, որը մենք զգում ենք ու նկատում այդ պահին, կամ թե չենք էլ նկատում, և այն անցնում է դեպի անցյալ, որը գոյություն չունի:

-Այո…, - մռլտաց Վանը:

-Եվ ահա, այս է «այն ժամանակ» հասկացությունը, որում մարդիկ ապրում են: Աստված իմ, իսկ ի՞նչ կլինի, երբ հանկարծ մարդը զրկվի հիշողությունից:

-Կապրի միայն ակնթարթով,- հանդուգն բացատրեց Վանը:

-Եթե մարդը զրկվի հիշողությունից և ապրի միայն ակնթարթով, ապա կկարևորվի միայն այն ակնթարթը, որում գտնվում է, - հետևությո ն արեցի և ինքս իմ եզրակացությունից վախ զգացի: Ու ներքին վախս կանխելու ցանկությամբ բողոքեցի.

-Այդ ի՞նչ ես ասում...

Վանը ժպտաց ու լուռ նայեց հորիզոնին՝ ասես վերջացնելով զրույցը:

Միմյանց հետ ծանոթանալու և զրուցելու արարողությունն այնպես էր գրավել մեր միտքը, որ ժամանակի սահքը չէինք նկատել, իսկ մենք արդեն լողում էինք օվկիանոսի ջրերի վերում՝ երկնակամարում: Մանր անձրև էր տեղում, թե՞ քամին էր ջրի մակերևույթից կաթիլներ բերում ու շաղ տալիս մեզ վրա, անհասկանալի էր: Ներքևում, օվկիանոսի ջրերին, քամու ուժով առաջ էր մղվում առագաստանավը: Օդապարիկը դանդաղ իջավ առագաստանավի վրա և իր մետաքսյա հագուստով միացավ նավի առագաստներին: Նավի անձնակազմը, տեսնելով իրենց միացած ճանապարհորդին՝ հետաքրքրված վազեց: Նավաստիները մոտեցան ինձ: Նրանք չէին էլ կասկածում, որ իրենց նավի վրա այդպես սահուն իջած հյուրը ոչ թե ծովահեն է, այլ սովորական ճանապարհորդ: Իսկ քանի որ ես գերազանց գիտեի միայն հայերեն ողջույնը, ապա հենց այդպես էլ արեցի.

-Բարև ձեզ, - ողջունեցի նրանց հայերեն:

Եվ, որքան հրճվանք պատճառեց նրանց իմ ողջույնը, ինչպես և ինձ, երբ նրանք իմ հայերեն ողջույնին նույնպես հայերեն պատասխանեցին: Լսելով իմ մայրենի լեզուն, ուրախացած հարցրի.

-Մի՞թե մենք հայրենակիցներ ենք: Բայց չէ՞ որ Հայաստանը ծովային երկիր չէ, ինչպե՞ս է, որ նա ունի հայ ծովագնացներ:

-Դուք վայրէջք եք կատարել «Կիլիկիա» առագաստանավի վրա, - հարգանքով զեկուցեց անձնակազմի նավաստին, - ապա շարունակեց, - թույլ տվեք ձեզ ուղեկցել նավապետի մոտ:

Իսկ նավապետն ավելի զարմացավ, քան ես կարծում էի. եթե ես զարմացել էի, որ հանդիպել էի հայ ծովագնացների, ապա վերջինս զարմացել էր՝ տեսնելով հայ օդանավորդի:

-Ուրախ եմ ձեզ ընդունելու «Կիլիկիա» առագաստանավի վրա, - ողջունեց նավապետը: -Ինչպե՞ս է պատահել, որ դուք համարձակվել եք ճանապարհորդել օդապարիկով:

-Գիտեք, ես ճանապարհորդում եմ հեքիաթային աշխարհում, և վախենալու հարկ չկա, պարզապես, կատարվում են իմ երազանքները: Իսկ դուք ովքե՞ր եք, հիմա ո՞ր դարաշրջանում եմ հայտնվել, ո՞ր դարի նավ է «Կիլիկիան»:

-Ոչ շփոթվեք, ոչ էլ վախեցեք, - ասաց նավապետը, մենք քսանմեկերորդ դարում ենք: Ես ու իմ անձնակազմի տղաներն ուսումնասիրեցինք դարեր առաջ նավարկող «Կիլիկիա» նավի և կառույցը, և քարտեզը, և որոշեցինք նոր ծնունդ տալ առագաստանավին, կառուցեցինք նավն իր նախկին տեսքով և գծագրերով, նավարկությունն էլ ընթանում է ճիշտ ու ճիշտ այն ճանապարհով, որով դարեր առաջ նավարկել է «Կիլիկիա» առագաստանավը: Չէ՞ որ մեր երկիրը առևտրական կապեր է ունեցել եվրոպական և ասիական երկրների հետ:

Իմ ուրախությունն ու զարմանքը կրկնապատկվեց, երբ նավասենյակներից մեկում տեսա թղթերի ու գրքերի մեջ կորած մի ծերուկ, որն անընդհատ գրում էր: Վանը վազեց ու բարձրացավ ծերուկի ծնկներին:

-Ա՜, ա՜... իմ բարեկամ, այս որտեղի՞ց հայտնվեցիր, - հարցրեց ծերուկը: Բայց ծերուկի մտքով էլ չանցավ, որ իր այդ հարցին իմ Վանը կպատասխանի, այն էլ՝ մարդու նման:

-Մյաու~, հայտնվեցի երկնքից, իսկ ծնվել եմ Վան քաղաքում: Առևտրականներն ինձ գնեցին Վանի շուկայում, իմ տերը վաճառում էր իր կատվի ծնած ձագերին, հետո առևտրականները բերեցին ինձ Անի քաղաք և նվիրեցին արքային: Բայց Անի քաղաք առաջին անգամ էր երկնքից հյուր գալիս, թագավորը որոշեց ինձ նվիրել օդագնացին: Եվ ահա ես այստեղ եմ:

-Այո՜... Դու շատ խելացի կատու ես, քո տիրոջ բախտը բերել է: Իսկ ես նավի օրագիրն եմ արձանագրում: Երազանքս եմ իրականացնում, երիտասարդների հետ կառուցեցինք այս նավը, և ես, որպես նավաստի-գրագիր, միացա նավարկությանը: Կցանկանայի ես էլ նավարկել քո երազային, հեքիաթ աշխարհում, բայց, անելիքներ ունեմ իրական կյանքում, պետք է արձանագրեմ «Կիլիկիա» նավի ընթացքն ու օրագիրը, - ասաց ծերուկն արդեն ինձ դիմելով:

Իմ փոքրիկ բարեկամ Վանը հպարտ-հպարտ քայլում էր տախտակամածին, նա մի քանի օր շարունակ միայն զամբյուղի ներսում՝ հատակին էր քայլել, կերել իր տառեխներն ու մլավել: Նա մերթ տախտակամածի անկյուններն էր ուսումնասիրում, մերթ իջնում ներքև ու նավամբարում շրջում: Երևում է՝ դա նրան չբավարարեց, և, դուրս գալով նավամբարից, բարձրացավ նավի կայմի վրա ու այնտեղից երկար ու սուր հայացքով նայում էր հորիզոնին: Հետո Վանը հասկացող պահվածքով ցած իջավ իր դիրքից ու հպարտ քայլով մոտեցավ ինձ: Բարեկամաբար քսմսվեց ոտքերիս և նստեց այնպես կիպ, որ զգում էի նրա ջերմությունն ու շնչառությունը: Սիրտս թրթռաց: Նրա պահվածքն ինձ համար շատ հուզիչ էր: Բազմիցս լսել էի կենդանիների բարեկամության ու հավատարմության մասին, երբեմն մտածել եմ, որևէ կենդանի պահել, բայց միշտ վարանել եմ և կենդանիներին սիրել հեռվից: Նրանց շփումից ու քնքշանքից սարսռեցնող զգացում եմ ունեցել: Բայց ահա Վանն ամեն պատնեշ քանդել ու տիրացել էր, իրենով արել իմ ընկերությունը: Քիչ հետո նավաստիները մեզ հյուրասիրեցին մրգեր ու պահածոներ: Ժամանակն անցնում էր, իսկ ժամանակը թանկ էր ոչ միայն մեզ համար, այլև՝ նավաստիների: Հրաժեշտի պահը եկավ:

Ես ու Վանը մնաք բարով ասացինք անձնակազմին, ասացինք, որ ուղղվում ենք դեպի Եգիպտոս, և նստեցինք մեր օդապարիկը:

ԱՆՍՊԱՍԵԼԻՆ

Ամպերին նստած լողում էր նավը երկնակամարում: Ներքևում իսկայական ջրային տարածությունը փոխվում էր երանգ առ երանգ: Ջուրն ասես երկնի ու բնության արտահայտիչն էր: Առավոտյան կողմ մռայլ, գորշականաչ, ապա մոխրադարչնագույն էր: Ահա, երկնքում ժպտում է արևը, արևի ճառագայթների հետ լցվում է ժպտուն ծիծաղով, տարածվում բիլ-կապույտով ու երբեմն էլ՝ երկնքի թույլ երկնագույնով: Ջրի դեմքին ծափահարվում են ալյակները, մերթ մեծանալով, մերթ մանրիկ ծլնգոցով ալիքվում ու խառնվում մակերեսի տարածությանը՝ դեպ հորիզոն: Օրը մոտենում էր մայրամուտին: Բնության խաղաղությունը երկար չտևեց, երկինքը ծածկվեց ծանր, գորշ ամպերով, փայլատակեց կայծակը, ու սկսվեց փոթորիկը: Պարզվում է՝ հեքիաթում էլ են լինում անսպասելի հարվածներ: Կայծակը փայլատակեց հորիզոնում, և նրա թևերից մեկն այրեց օդապարիկի մետաքսյա հագուստը: Վերջինս կորցնելով ընթացքը՝ ուղղվեց դեպ անորոշություն: Ծուրջը խավար պատեց, իսկ երբ պարզվեց, զամբյուղը հայտնվեց ամբողջովին կա...միր ջրերի վրա: Ջրի կարմիր գույնից մետաքսը կարմրեց: Զամբյուղը լողում էր կարմրագույն ջրի վրայով, իսկ ջրից դեպի զամբյուղ էին թռչում կարմիր ձկներ: Նրանք կարմրաարծաթափայլ փայլատակում էին խավարից ծագած արևի շողերի տակ: Ես հասկացա, որ հայտնվել եմ Կարմիր ծովում: Թեև այդ պատահարն այդքան էլ հաճելի չէր, սակայն ուրախացա, որովհետև մոտեցել էի Եգիպտական բուրգերին: Միայն չգիտեի՝ ինչպես փակել մետաքսյա հագուստի պատռվածքը: Որոշեցի օգտվել զամբյուղի տված հնարավորությունից և լողալ նրանով դեպի ափ: Թեև, միևնույն է, այն արդեն լողում էր, և ջուրն էլ չէր լցվում ներս, միայն երբեմն-երբեմն վեր թռչող ձկները նկարում էին ինձ և, նրանցից մեկն էլ փորձում էր նկարագրել իմ վիճակը: Միանգամից հասկացա, որ այդ ձուկ-լրագրողը հաղորդում է պատրաստում ձկների համար, գուցե իրենց հեռուստատեսության համար, որը կդիտի նաև ծովերի ու օվկիանոսների արքա Նեպտունը: Ես անմիջապես հարդարեցի մազերս, որոնք թրջվել, խճճվել ու զզզվել էին քամուց ու անձրևից: Իհարկե, գիտեք և կռահում եք, որ այս զամբյուղում ես այլ սենյակ չունեի, ...ղղակի թեքվեցի մի կողմ և մատներով սանրեցի մազերս:

Կարմիր ձկնիկներն այնքան էին ոգևորվել իրենց գտածոյով, այսինքն՝ ինձանով, որ լցվում էին զամբյուղ և հարցեր ու հարցեր տալիս: Կյանքումս չէի տեսել խոսող ձկներ: «Ասես հեքիաթական գտածո լինեմ»,-մտածեցի: Բավական չէին այն աղավնիները, հիմա էլ՝ ձկները:

-Դուք ի՞նչ նպատակներով եք այցելել մեր տարածաշրջան:

-Կպատմե՞ք մեզ ձեր թռչող սարքի մասին:

-Դուք որտե՞ղ եք ծնվել...

-Որտե՞ղ մեծացել...

-Դուք չեք ցանկանում, չէ՞, ոչնչացնել մեր ձկնային թագավորությունն ու քաղաքակրթությունը...

-Դուք հետաքրքրվու՞մ եք մեր հանքաշխարհով, մենք կարող ենք ձեր երկիր կարմիր աղ առաքել:

-Սպասե՛ք, սպասե՛ք, ես կարծում էի՝ ձկներն ընդհանրապես չեն խոսում, իսկ դուք ոչ միայն խոսում եք, այլև չեք լռում: Ձեր հարցատարափով ինձ շփոթեցրիք: Եթե ցանկանում եք լսել ինձ, ապա սովորեք լռել, ինչպես բոլոր ձկները:

Երբ նրանք վերջապես լռեցին, ես պատմեցի, որ նպատակս ճամփորդությունն է, եկել եմ քսանմեկերորդ դարից, և այս սարքը հայտնի է, որպես թռչող սպորտային սարք, և ոչ թե՝ կործանիչ, կողմ եմ խաղաղությանը, և ինձ դուր չեն գալիս տարածաշրջանում ընթացող պատերազմները: Պատերազմները վնասում ու վերացնում են պատմական հուշարձանները, իսկ Եգիպտական բուրգերը տեսնել շատ եմ ցանկանում: Նրանց պատմեցի իմ պատմությունը: Հանկարծ հիշեցի Թումանյանի «Խոսող ձուկը» և քթիս տակ ծիծաղեցի: Ձկները զարմացան, իսկ ես մտածեցի, որ ժամանակ չկա նրանց այդ հեքիաթը պատմելու: Ափսոս: Խոսող ձկներին կարելի էր պատմել մեր հանելուկային և հանելուկ վերծանող ձկան մասին, որն իսկապե՛ս խոսում էր: Վերջապես նրանք դադարեցրին հարցատարափը: Ուրախացա, որ պետք է շարունակեմ ճանապարհս, իսկ ուղեղումս միտք առկայծեց. «Այս ինչու՞ ձկները չվախեցան իմ Վանից, չէ՞ որ նա կատու է»:

Անմիջապես հարցրեցի այդ մասին:

-Այ քեզ ձկնե՜ր... Դուք ի՞նչ տեսակի ձկներ եք, որ չեք վախենում կատվից:

-Հի~, հի~, - խնդմնդացին ձկները, - մենք չէինք էլ մտածում, թե նա մեզ կուտի, չէ որ նա անչափ ազնվական է, որպեսզի իրեն թույլ տա ուտել լրագրող կամ պատվիրակ ձկների:

Իսկ իմ Վանը նստել էր անկյունում և զբաղված էր ինքնահարդարմամբ: Այո իմ Վանը ոչ միայն չափազանց ազնվական, այլև մաքրասեր ու խելացի կատու էր: Նրա համար պատշաճ չէր խանգարել իմ և ձկների խոսակցությունը:

Փրփրալիքները ճերմակ ոչխարիկների նման վազում էին ծովի մակերևույթով: Երբ հեռացան լրագրող-ձկները, չգիտես որտեղից հայտնվեցին փքաձկները, նրանք ուռչում էին հանց գնդակներ և փուչիկների նման թռվռում զամբյուղի շուրջը:

-Նայիր, մենք նման ենք քո օդապարիկին: Թույլ կտա՞ս քո զամբյուղը վեր բարձրացնենք:

-Օ՜, ոչ, շնորհակալ եմ: Հանկարծ կփչի թեթև քամի, և դուք անմիջապես ցած կթափվեք կամ օդում կչորանաք առանց ջուր և ջուր կպահանջեք, իսկ այդ դեպքում անհրաժեշտ կլինի, որ կրկին վար իջնենք ջրի վրա: Այնուհանդերձ, շնորհակալ եմ, դուք չափազանց բարեկիրթ ծկներ եք: Դուք՝ ձեր ճանապարհով, մենք մեր:

ԱՆԱՊԱՏՈՒՄ

Մեր յուրօրինակ նավակն ափ հասավ. Ես որոշեցի, չդիմել կախարդական բառերի օգնությանը, այլ ճանապարհը շարունակել ուղտերով: Ձկները հեռացել էին: Ականջներումս լռություն էր: Օդապարիկը պահ տվեցի նավահանգստում: Ահա և ուղտերը:

Նավահանգստում ուղտերն սպասում էին ուղևորի այնպես, ինչպես տաքսի մեքենաները մեր քաղաքի կայանատեղերում՝ կողք-կողքի, շարքով: Ինձ ասացին, որ կարող եմ ընտրել որևէ մեկին:

-Իսկ ինչպե՞ս պետք է նստեմ այս սապատների միջև, - հարցրեցի ուղտին:

Ուղտն անտարբեր լռում էր:

Ընտրեցի և նստեցի այնպես, ինչպես ձի կնստես, և ուղտն օրորվելով, մի կողմից մյուսը թեքվելով՝ բարձրացավ: Ուղտը հենելով ծալած ոտքերը բարձրանում է, և դու հայտնվում ես վերևում: Եվ ահա ես, ինչպես ձիուն կշոյեմ, շոյում եմ ուղտի վիզը, նկատում եմ այդ նրան հաճելի է, և նա գլխով հավանության նշան է տալիս, ապա ճոճվելով շարժվում է առաջ: Դուք, իհարկե, կծիծաղեք ինձ վրա, որ և՛ կախարդական բառեր գիտեմ, և՛ թռչող սարք ունեմ, որով կարող եմ վայրկյանում հասնել ցանկացած վայր, բայց նստել եմ այս ուղտի մեջքին...

Օ՜յ, օյ՜, օյ՜... այս ինչ եմ ասում, հանկարծ չլսի՞ ու... վիրավորվի, և այս անգամ կնստեմ ոչ թե ուղտի մեջքին, այլ այրող ավազների վրա: Այնպես որ, ոչինչ չեմ խոսում, ոչինչ չեմ ասում այն արարածի մասին, որի մեջքին նստած եմ, միայն նայում եմ շուրջս: Իսկ շուրջս դեղին ամայություն է:

Անապատի քամուց պաշտպանվելու համար փաթաթում եմ գլուխս: Միայն աչքերս են երևում: Այսպես լուռ առաջ ենք շարժվում. լսվում է ուղտի ծանր քայլի ու ավազի շփման ձայնը, իսկ օդում՝ քամու մետաղյա երաժշտությունը: Քամին ավազահատիկներն առնելով թևերին, ինքնահմա պտտում էր օդում ու... հետո ցանուցիր փռում՝ արարելով բլուրներ ու ավազե ալիքներ:

Գլուխը բարձր, խորաթափանց հայացքը հորիզոնին ուղղած՝ սահում է անապատի կենդանի նավը: Ուղտն անընդհատ փնչացնում է, հա փնչացնում...

Այդ հսկա կենդանին ծանր ու դանդաղ շարժվում էր, իր վրա տանելով սեփական երկու սապատները, և իհարկե, նաև մեզ՝ իր նոր բարեկամներին:

-Ի՞նչ է պատահել, - վերջապես հարցրի, - եթե դժգոհում ես քո ուղևորներից, կարող ենք իջնել, և մեկ ուրիշը հաստատ կգտնվի, որը մեզ կտեղափոխի:

Ուղտը լռում էր ու չէր դադարում փնչացնել: Ես շարունակեցի՝ աշխատելով նրան զրույցի ներքաշել ու տրամադրել:

-Ի՞նչ լավ է, որ դու երկու սապատ ունես: Մենք տեղավորվել ենք սապատների միջև, և այսպես շատ հարմար է: Ու ինչ լավ է, որ դու բոլորովին չես խոսում:

-Է՜, - հառաչեց ուղտը:

-Չէ՛, սխալվում եմ, չի կարող պատահել: Այս հեքիաթում բոլորը խոսում են: Մնում է վերնագրեմ «Խոսող կենդանիների հեքիաթ»:

-Ինչ է, դու ինչ-որ բանից դժգո՞հ ես, - հարցրի ուղտին, - գուցե, կատու չե՞ս սիրում, և քեզ պարտադրե՞լ եմ մեջքիդ կրել այդ կենդանուն:

-Ինձ համար միևնույն է՝ ով կնստի, պարզապես հիշեցի անցյալս, առանց սապատի կերպարս:

-Ես միշտ այսպիսին եմ եղել, ինչպես տեսնում ես մարդ եմ: Դե, դու առաջին անգամ չես մարդ տեղափոխում: Իսկ սա իմ ընկերն է, իմ Վաննն է, նա էլ միշտ կատու է եղել: Միայն տեղյակ չեմ՝ երբվանի՞ց է սկսել խոսել: Երբ ինձ հանդիպե՞ց, իմ հեքիաթու՞մ, թե՞ երբ ծնվեց իր Վան քաղաքում:

-Իսկ ես՝ ոչ: Իհարկե, ծնված օրից ուղտ եմ եղել, սակայն հնում ուղտերը սապատ չեն ունեցել: Այն ժամանակի ընթացքում է ավելացել մեր մեջքին: Եվ երբ դուք ինձ ասում եք սապատավոր ուղտ՝ վիրավորվում եմ: Եվ այդ վիրավորանքից՝ խոսում եմ:

-Չգիտեի, - զարմացած վրա տվեցի, հասկանալով, որ հանդիպել եմ երկար պատմության, - խնդիր չկա, եթե դժվար չէ պատմեք, խնդրում եմ, և հասկանալի է, կներեք, եթե վիրավորել եմ:

-Ասեմ, ինչպես, - հոգոց հանելով շարունակեց ուղտը՝ չլսելու տալով ներողությունը:

-Միևնույն է, ժամանակ ունենք, մենք երկար ենք գնալու, այնպես որ, կարող ես հանգիստ պատմել, իսկ և իսկ երկար պատմության համար է այս ճանապարհը:

-Հին, շատ հին ժամանակներում իմ նախնի ուղտն ապրում էր կանաչ, փոքրիկ վայրում, որին օազիս էին անվանում, որովհետև այնտեղ ջուր կար, և աճել էին ծառեր ու ծաղիկներ: Անմիջապես այդ օազիսին շրջապատում է անապատը: Անապատն ավազե թագավորություն է և՝ արևի անխնա այրող ճառագայթներ: Ավազն անապատում այնքան շիկացած էր, որ մարդիկ ոտքով չէին կարողանում քայլել նրա վրայով, և նրանք որոշեցին նստել ուղտի մեջքին ու տեղափոխվել անապատով: Իսկ իմ նախնի ուղտը սիրում էր նստել կամ շրջել օազիսում և սովոր չէր ցամաք ու չոր անապատի: Ուղտը շատ էր ծարավում, այնքան էր ծարավում, որ չէր դիմանում: Այդպես մի քանի անգամ, և նա սկսեց նախքան ճանապարհի ընկնելը

շատ ջուր խմել: Նա լիտրերով ջուր էր խմում, որպեսզի մինչ մյուս օազիս հասնելը չծարավի: Եվ այդպես շարունակ: Ու մի օր էլ, մարդիկ տեսան, որ ուղտի մեջքին իսկա բլուր է գոյացել: Նրա մեջ ուղտը հավաքում էր իրեն անհրաժեշտ ջրի քանակն ու ճանապարհի ընկնում: Ահա, այդ ուղտը եղել է իմ պապի պապը, ավելին ապուպապը:

-Վա՜յ, ուրեմն այդ պատճառո՞վ է քո մեջքին երկու սապատ. բայց գիտես, այն շատ հարմար է նստելու համար, մտածիր, որ դրանով դու օգնում ես մարդկանց, - ուրախացած բացականչեցի ես:

- Մարդկանց օգնելն ինձ հարկավոր չէ, ավելի լավ էր քնեի մի ծառի տակ, կամ ցանկության դեպքում՝ փուշ արածեի, - փնթփնթաց ուղտը:

-Դու փու՞շ ես ուտում:

-Այո, ես այն շա՜տ եմ սիրում:

-Իսկ ես սիրում եմ իմ երկիրը. իմ երկրում երբ ծաղկում է նշենին, բլրալանջերը նախշվում են կաքնավարդագույն խոծյակներով: Վայրի նշենին մի քիչ փշոտ թուփ է, իսկ ահա ձեր անապատում քամին ավազների մակերևույթին գլորում է փշե գնդակներ:

-Այո՜, որոնց երբեմն որսում են ուղտերը: Դրանք անապատում աճող բույսեր են, - ախորժակով խոսքս շարունակեց ուղտը:

Անապատի արևը կիզիչ էր, շիկացած հրե գունդ, և մենք լռեցինք: Երբ թույլ քամի էր բարձրանում, այդ քամին օդում պտտում էր ավազն ու լցնում բերաններս: Մենք փաթաթվեցինք շորերով, որ քամին ու ավազը մեզ չխեղդեն: Ուղտը դանդաղ ընթանում էր շիկացած ավազների վրայով: Շուրջը քամու ձայնն էր ու դատարկություն, հեռվում երբեմն-երբեմն երևում էին ավազե բլրակներ ու այստեղ այնտեղ աճած փշե թփեր: Այս անայի տարածության մեջ, ուր միայն ավազն էր արևի տակ փայլատակում, հեռվում մի սև կետ նշմարվեց. որքան մոտենում էինք, այն ավելի ու ավելի էր նմանվում մարդու:

-Ա՛յ քեզ բա~ն, մի՞թե ճիշտ եմ, մա՛րդ է:

Ինչ-որ մեկն անապատում ավազն էր բահով փորում՝ քրքրված հագուստով, գլխին հին, գույնը կորցրած փալաս կապած: Կապված էր նաև մեկ աչքը: Այնպես, ինչպես ավազակներն էին կապում հին ժամանակներում: Մենք կանգնեցինք այդ տարօրինակ մարդու կողքին:

-Դուք ո՞վ եք, - վախս զսպելով, բայց հետաքրքրությամբ ու անհամբեր, հարցրեցի ես:

-Ի՞նչ, այդ ի՞նչ լեզվով ես խոսում,- գոռգոռալով պատասխանեց մարդը:

-Հայերեն:

-Է՞. է... մարդիկ ինչ ասես կհորինեն, ես էլ կասեմ ապրում եմ, արդեն չգիտեմ քանի տարի փորում եմ, ոչ գանձ կա, ոչ ժամանակ գիտեմ, - դժգոհեց մարդը: - Իսկ դեռ երեկ, նման լեզու չկար:

-Ինչպես թե, հայերենը երկու հազար և ավելի տարեկան է: Երբ Մեսրոպ Մաշտոցն այն ստեղծեց, նաև ասում են, թե երազում է տեսել, դեռ դրանից առաջ էլ կար, գիտնականներն ասում են, որ հայերենն անգամ շումերերենի հիմքն է եղել :

-Հո~, հո~, հո~, չափազանցնու~մ ես, թեև, լավ, մի նեղացիր, այն երկրում, ուր ապրում էի, այդպիսի լեզու չկար, և հետո, ես ի՞նչ իմանամ կար, թե՞ չկար, չէ՞ որ երբեք չեմ սովորել: Հայրս ու մայրս աղքատ էին: Նրանց կարծիքով, եթե առևտրական դառնայի, կփրկեի իրենց աղքատությունից: Հայրս շատ էր խմում և ամեն օր քոթակում էր բոլորիս: Միևնույն է, հույս չկար, որ կսովորեի, իսկ այդ կյանքից ձանձրացել էի, այդպես ապրել չէի ուզում: Եվ ես փախա տանից ու քաղաքի նավահանգստում գաղտնի մտա մի նավի նավամբար, որոշ ժամանակ խոնավ ու մութ նավամբարում ապրելուց հետո, նավաստիներն ինձ գտան ջերմության մեջ զառանցելով: Նրանք ինձ պահեցին այնքան, մինչև կազդուրվեցի, որոշեցին իջեցնել որևէ նավահանգստում, բայց նրանց սիրելին էի դարձել և ճարպկորեն իրենց օգնում էի նավի վրա ինձ հարմար գործերում, և ահա թողեցին իրենց կողքին՝ նավի վրա: Հետո դարձա նավաստի: Երկար տարիներ ծովերում ու օվկիանոսներում նավարկելով՝ բազմաթիվ նավեր կործանեցինք ու թալանեցինք, ժամանակն այնպես անցավ, որ դարձա նավապետ, հետո էլ միայնակ, առանց նավի ու անձնակազմի մնացի, դե գիտես, երբ թալանում ես, երբեմն էլ պարտվում ես: Ահա, այդ ժամանակ էլ որոշեցի գալ այստեղ ու գանձ որոնել: Իսկ դու ի՞նչ ես փնտրում այստեղ, այս անապատում, տեսնում եմ՝ խնամված ես:

-Եկել եմ Եգիպտական բուրգերը տեսնելու:

-Ի՞նչ բուրգեր, ախ, հա~, այն, որ թալանեցինք: Այն մի խենթ փարավոն էր հրամայել կառուցել, և իր ունեցած ոսկիները թաղել էր իր հետ, դե, մենք էլ օգտվեցինք նրա հիմարությունից ու... Ոսկորներն էլ ոսկե հագուստով էր պատել... Քիչ առաջ գնա՝ կտեսնես, շատ բարձր է, չես շփոթի:

Այդ տարօրինակ մարդուն թողնելով իր գործին, մենք առաջ անցանք:

ԱՆԱՊԱՏԻ ՀՐԱՇՔԸ

Օրորվելով, օրորվելով, առաջ ու հետ ճոճվելով, հսկա թաթերն ավազի մեջ մխրճելով՝ առաջ էր սահում անապատի նավը: Հորիզոնի գիծն՝ ուղիղ, ասես ձուլված երկնքի հետ, համատարած դեղին, շիկացած ավազ: Տապից ծուլացած Վանը ննջում էր ուղտի մեջքին ցցված խուրջինի գրպանում: Օդում պարում էին ավազահատիկները, որոնք բարձրանում էին սամումի ուժգնության համեմատ, նրանք նվագում էին իրենց մետաղական երաժշտությունը՝ ավազե սիմֆոնիան, որի դիրիժորը սամում քամին էր:

Եվ իսկապես, երբ ցրվեց օդում պտտվող անապատի փոշին, երևաց մի հսկայական շինհրապարակ, որտեղ աշխատում էին հազարավոր մարդիկ: Այո, չեմ շփոթել, իմ առջև, անապատի մեջտեղում, աշխատում էին հազարավոր կիսամերկ մարդիկ: Մենք մոտեցանք: Տեսարանն առավել պարզ դարձավ: Հրապարակում լցված էին հսկա քարեր, ինչպես մեր ապառաժները: Զարմանքից բերանս բաց նայեցի տեսարանին, որը սկզբում ինձ ուրվապատկեր թվաց: Հետո հասկացա, որ պատրանք չէ, և, ահա այն ինչ իմ առջև էր: Իմ դիմաց, անմիջապես վերևում, երկնակամարի որոշակի հատվածում, հսկա պտտահողմ հիշեցնող ոլորան էր երևում: Ոլորանի կենտրոնը բացուխուփ էր լինում ամենակուլ խոռոչի նման: Ոլորապտույտը լուսարձակում էր: Երկու կողմերից դեպի երկիր էին իջած երկու հարթ, հայելանման, ուղղանկյուն մակերեսներ. նրանց եզրերը հենված էին ավազին: Հայելամակերես պատերը պատված էին անչափ մանր գծագրերով: Այդ պատերի վրա բազմաթիվ սալիկանման պատուհանիկները մեկընդմեջ բացվում ու փակվում էին՝ ցուցադրելով ներքին գծագրային պարունակությունը, իսկ երբեմն էլ արագությամբ ցույց տալիս թվեր ու պատկերներ: Զզարմանաք և չմտածեք, թե խոսում եմ այսօրվա նուրբ, թվային հեռահաղորդակցության միջոցների մասին: Աչքովս էի տեսնում հայելային մակերեսները, որոնք թրթռում էին և արձագանքում ներքին ու արտաքին բոլոր տեսակի ազդեցություններին: Ապշեցուցիչ էր, որ այս բոլորը տեսնում էի այստեղ, անապատի կենտրոնում, որը միայն տեղ-տեղ էր կանաչ: Հանկարծ մտածեցի. միայն ես չէ որ ճեղքել եմ ժամանակի պատը, գուցե, նրա՞նք էլ եկել են ապագայից: Կրկին փորձեցի հավատալ, որ իրականում ժամանակ հասկացություն գոյություն չունի, այդ մենք՝ մարդ արարածներս ենք մեզ համար չափումներ ստեղծել, կանոնավորել ժամանակը: Եվ հիշեցի ու կրկնեցի՝ իրականում անցյալը գոյություն չունի, ապագան դեռ առջևում է, չի եկել, ուրեմն և գոյություն չունի, իսկ ներկան այն ակնթարթն է, որը մենք զգում ենք ու նկատում, կամ թե՝ չենք էլ նկատում, և այն անցնում է դեպի անցյալ, որը գոյություն չունի: Եվ ահա, սա է այն ժամանակ հասկացությունը, որում մարդիկ ապրում են: Ու եթե հանկարծ մարդը զրկվի հիշողությունից և ապրի միայն ակնթարթով, ապա կկարևորվի միայն այն ակնթարթը, որում գտնվում է:

-Բայց ի՞նչ ես ասում. ողջ տիեզերքը կանոնների ամբողջություն է, - ձայնը, ձայնը, որ գրեթե ճչում էր ուղեղումս, փորձում էր ինձ համոզել ու ապացուցել, որ սխալ եմ, որ կանոնները մարդիկ չեն ծնել, որ մարդը տիեզերքի մի մասնիկն է, և որ մարդն էլ, տիեզերքն էլ կանոնակարգված են բնության հզոր ու միակենտրոն ուժի հայեցողությամբ:

Ինչևէ, կանգնած նայում եմ դիմացս տարածված տեսիլքին: Բազմաթիվ լույսեր արձակող և մանր, հազարաձյուղ գծագիր հիշեցնող պատերից կապույտ լույս էր տարածվում դեպի կենտրոն, որտեղ լցված էին հսկայական ապառաժներ: Եթե իմ ժամանակաշրջանի մտածողությամբ մտածեմ, ապա այդ ժայռերն այդտեղ բերելու համար հարկավոր էին հսկա, ծանրատար բեռնատարներ և նաև վերամբարձ կռունկներ, որոնք կշարժեին ու կտեղափոխեին ապառաժ-քարերը: Մինչդեռ այսօրվա տեխնիկա հիշեցնող ոչինչ չկար այդ շինհրապարակում, բացի հայելի պատերից, որոնց մասին արդեն ասացի, և որոնք անգամ քանմեկերորդ դարի

գիտության համար դեռ գաղտնիք են: Թվերը, որոնք երևում էին ցուցատախտակների վրա, ճառագայթում էին դեպի կենտրոն, ուր հավաքված էին ժայռաբեկորները: Ցուցատախտակից լուսաժապավեններով չափում էին, իսկ այնուհետև մոտենում էին այլմոլորակայինները, որ քարակտրիչ հաստոցի էին փոխարինում: Նրանք ձեռքի լուսային ճառագայթ արձակող գործիքներով կտրում էին քարը և առանց դժվարության դնում մի կողմ: Ապա տեղաբնակները իրելով շարժում էին տոննաներ կշռող քարը, որը փետուրի թեթևությամբ բարձրանում էր վեր՝ իր հետ բարձրացնելով այդ մարդկանց, և նրանք քարերը օդում պտտվող պղպջակների հանգույն դարսդարսում էին ու շարում այնպես ճշգրիտ, որ անգամ սայր չէր կարող անցնել քարերի արանքով:

Երկու հայելանման պատերն իրենց ներկայությամբ ու ճառագայթարձակումով վերացնում, ազատում էին տարածությունը գրավիտացիոն ձգողությունից, և այդ լեռ-քարերը, այնպես, ինչպես տիեզերական տարածության մեջ է նյութը կորցնում իր քաշը, սրանք էլ, կորցնելով ու պոկվելով երկրի ձգողությունից, ստանում էին փետուրի թեթևություն և վեր բարձրանում:

Օդը բվվում, զրնգում ու սղոցվում էր, ասես դարբնոցում:

Վանն արթնացավ աղմուկից, և զարմացած նայեց շուրջը: Դեռ սկզբում, համոզված եմ, դուք էլ նկատեցիք, որ ինձ զարմացրել էր այլմոլորակայինների ներկայությունը, այն պահին, երբ տեսա, որ այդ մարդկանց մոտեցան այլմոլորակայիններ, այո՛, այո՛, այնպիսին, ինչպիսին կան մեր ֆիլմերում: Այլմոլորակայիններն աշխատող մարդկանց հետ միասին, մի շարժումով, այդ հսկա ապառաժները բարձրացրին և դրեցին իրենց տեղը... Քարը՝ քարի վրա:

-Բայց... բայց, սրանք այլմոլորակայիններ են, - բացականչեցի:

-Այլմոլորակայինը դու ես, ինքդ քո մասի՞ն ես ասում, - բողոքեց այլմոլորակայինը, թե ինչպես ինձ հասկացավ, չեմ հասկանում, - և շարունակեց, -մենք եկել ենք օգնելու այս այլմոլորակայիններին, որոնք չէին կարողանում իրագործել իրենց արքայի հրամանը: Նրանք մեզ հաղորդագրություն ուղարկեցին, հետևյալ պարունակությամբ. «Արքան հրամայել է կառուցել հսկա դամբարան, որի գագաթը կմխրճվի ու կանհետանա երկնքում»:

Մարդիկ, ովքեր աշխատում էին, դադարեցրին իրենց աշխատանքը և գլխով համաձայնության նշան արեցին: Նրանցից մեկը խառնվեց խոսակցությանը.

-Մեր խենթ արքան հրամայել էր, որպեսզի, իր հպատակները մի այնպիսի կառույց կառուցեն, որի ծայրը հասնի և մխրճվի երկինք: Եվ այդպես, արքան կկարողանա մոտ լինել «Ռա» Աստծուն: Եթե չիրագործենք, նա կգլխատի մեզ: Եվ ահա, մենք օգնության հաղորդագրություն ուղարկեցինք, իսկ նրանք մեզ լսեցին և եկան: Նրանք Հայկ համաստեղությունից են՝ Հայկ համաստեղության բնակիչները: Նրանք հետները բերել են իրենց տեխնիկան:

-Այ թե մեր գիտնականները տեսնեին ու լսեին ձեր պատմությունը, թեև նրանք այդպես էլ կասկածում են, որ բուրգերը սովորական մարդկանց գործ չեն: Լավ, իսկ ու՞ր է ձեր թագավորը:

-Ահա՛:

Այդ խեղճ, հոգնած ու տանջված մարդիկ, վախեցած ու վարանոտ, մատով ցույց տվեցին քիչ հեռվում, գլխի վրա կանգնած մի պատանու: Հետո վախեցած շարունակեցին աշխատել:

Ուղտը քայլերն ուղղեց ցույց տրված կողմը:

Զարմացած մոտեցա պատանուն. նա գրեթե կիսամերկ կանգնած էր գլխի վրա, շիկացած ավազների մեջ ու դեռ էլի կմնար այդպես, եթե նրան չխանգարեի:

-Ճի՞շտ է, որ դուք թագավոր եք:

-Հը-մ... Կարող էի և չպատասխանել... Կարող էի քեզ գլխատել, միայն այն պատճառով, որ համարձակվել ես ինձ խանգարել: Եվ հարց տալ այն պահին, երբ կենտրոնանում եմ և խելքս գլխիս մեջ եմ հավաքում: Այսինքն, մտքերս եմ ի մի բերում: Բայց, հաշվի առնելով թագավորական վարվեցողության կանոնները և այն, որ անչափ շատ եմ սիրում մշակույթ և այն, ինչ ավանդարդ է, մտածում եմ, որ քեզ հարկավոր է ներել և անհրաժեշտ է զրուցել քեզ հետ, այսինքն՝ ներում եմ, որովհետև այդպես ցանկանում եմ: Որովհետև դու գեղեցիկ ես և նման չես մեզ, դու ասես նոր հնարանք լինես՝ մարդ տեսակի:

-Ա՜... ա՜... ես, ես... Ճիշտ է, ձերդ արեգակնային պայծառափայլություն, դուք ինձ վախեցրիք, թույլ է ասված, դուք ինձ սարսափեցրիք, սակայն, կասեմ, որ դուք ճիշտ եք կռահել, չէ՞ որ ես ապագայից եմ՝ քսանմեկերորդ դարից: Իսկ մեր ժամանակի արվեստը չափազանց ժամանակակից է, և մենք երբեմն չենք էլ հասկանում, թե ի՞նչ են ուզում ասել այդ ժամանակակիցները: Նրանք իրենց կոչում են ավանգարդիստներ, և ասեմ, որ կան էլի բազմաթիվ անվանումներ, իզմ-եր ու իզմ-եր, որոնք ես երբեք չեմ հասկացել. չէ՞ որ կարևորը գեղեցիկն է:

-Իմ թագավորության կանայք խոսելու իրավունք չունեն: Իսկ քանի որ դու խոսեցիր, ուրեմն կլինես իմ առաջին կինը: Եվ երբ մահանամ, իսկ ես գիտեմ այդ ժամանակը, դու կթաղվես այստեղ, այս բուրգում, որը կառուցում են իմ հրամանով. կթաղվես որպես առաջին կին:

Սարսափեցի, միաժամանակ զարմանքից քարացա փարավոնի այդչափ անմիջական որոշումից: Լսել էի մշակութասեր փարավոնի մասին ու գիտեի, որ կա մի փարավոն, որ պատանի է մահացել: Հարկավոր է արագ որոշում ընդունել. Ինչ-որ երկար մնացի այս երկրում, անգամ չկարողացա տեսնել բուրգերը: Անընդհատ ինձ համար ոչ նպաստավոր, անբարեհաճ և նույնիսկ վտանգավոր դարեր եմ ընտրում և ընկնում վատ իրավիճակների մեջ: Ժամանակն է կախարդական բառերն ասելու:

-Երբ մարդիկ դժգոհում են, ստեղծում են նոր կերպարներ, - շարունակեց պատանի փարավոնը: Նա արդեն ուղղվել էր, բայց կրկին ցանկանում էր ընդունել իր առաջնային դիրքը:

-Ի՞նչ նոր կերպարի մասին է խոսքը, լավ չհասկացա, - իսկ մտքումս ասացի, որ շատ զբաղված եմ փախչելու մտքով:

-Ես վախենում եմ ժամանակից, իսկ ժամանակը թող վախենա բուրգերից: Ավելի լավ է՝ ես գլխի վրա կանգնեմ, քան թե՝ ժամանակը: Ժամանակը կործանում է ամեն ինչ: Մարդիկ ծերանում են և հրաժեշտ տալիս երկրային կյանքին, աշխարհին: Վերանում են քաղաքներ ու պետություններ, և մնում է նա, ով ուժեղ է, ով հաղթահարում է և առաջ անցնում ժամանակից:

-Բայց ժամանակը չի կարող գլխի վրա կանգնել, այն նյութեղեն չէ: Եվ հետո, ժամանակ գոյություն չունի: Ես… - ես անզոր կմկմում էի…

-Իսկ դու ո՞վ ես, որ ինձ հակառակն ապացուցես և խոսես իմ կամքին ու խոսքին հակառակ, - գոռգոռաց փարավոնը:

-Այո, այո, ի՞նչ եմ ասում, չէ՞ որ իսկապես իմ ժամանակը գլխիվայր է դարձել: Խառնիխուռն, որ դարում ասես հայտնվում եմ: Կներեք, համարձակությունս ձեր բարության թույլտվությամբ էր: Ձեր մա՞յրն է եղել Նեֆերտիտին: Դարեր շարունակ մեր գիտնականները փորձում են հասկանալ ձեր հիվանդության պատճառն ու չեն գտնում, - ես փնտրում էի բառեր, որոնք կփրկեին դրությունը: -Որոշ կասկածներ ունեն, անգամ մտածում են, որ ձեր անմիջական հպատակները կամ էլ քույրերն են հարվածել ձեզ թիկունքից:

-Ինչե՞ր ես խոսում: Նեֆերտիտին իմ հոր երկրորդ կինն է: Նա գեղեցկուհի է: Առաջինն էր, բայց մայրս ավելի սիրելի է հորս: Դու իմ առաջինը կլինես:

-Իսկ դուք նույնիսկ չե՞ք հարցնելու իմ ցանկության մասին, ցանկանու՞մ եմ արդյոք ձեր կինը լինել, - կմկմալով, բայց և հատ-հատ ու լսելի ասացի բառերը, որոնց պատասխանը ինքս էլ գիտեի:

Ոչ, այլևս չի կարելի հապաղել: Մտածում եմ՝ գուցե իմ մասին է եղել պատմությունը, չէ՞ որ Նեֆերտիտի նշանակում է՝ «գեղեցկուհին եկավ»: Այո, հենց այդպես էլ եղել է. ապագայից եկել է մի գեղեցկուհի, և նրանք անվանել են Նեֆերտիտի: Չմտածեք, թե ինքնահավան եմ և գովերգում եմ ինքս ինձ, պարզապես տեսա, թե ինչպիսին են նրանց կանայք. թխամաշկ ու, նույնիսկ կարելի է ասել, սև մաշկով: Իսկ իմ մաշկը ճերմակ է նրանց համեմատ, ուրեմն և գեղեցկուհի եմ նրանց համեմատ: Ժամանակն իմ օգտին չէ, ընկել եմ մտքերի հետևից, իսկ փարավոնն արդեն կասկածում է, որ իրեն հավատարիմ չեմ չէ՞ որ անընդհատ հակառակ եմ խոսում, և այդ ապագայի իմացությու~նը…

-Գիտնականներն այս դամբարանում չեն գտել Նեֆերտիտիի մարմինը, թեև կասկածում են, որ կան սենյակներ, որտեղ կարող է դեռ գտնվել նրա մարմինը … -

ասացի բարձր, բայց և մտածեցի. «Այս ի՞նչ եմ դուրս տալիս... խեղճ փարավոնը որտեղի՞ց իմանա ինչ է գտնվել այս դամբարանում...»

Եվ կրկին հարցս ուղղեցի փարավոնին.

-Չեմ հասկանում, ինչպե՞ս եք մտածում: Դուք ինչ է, կարծում եք, որ այն ողջ հարստությունը, որը դուք տեղավորում եք դամբարանում, մնալու է ձեզ հե՞տ: Ինչ է, դուք մարդկանց չե՞ք ճանաչում: Ախր, ամբողջը թալանելու են: Փորելու են ու փնտրելու են, ինչպիսի գաղտնարան ու փական էլ սարքեք: Արդեն քանի դար քանդում ու փնտրում են: Եվ թալանել են ու թանգարաններ ստեղծել: Բայց չէ, ճիշտ եք անում, եթե այդ ծիսակարգը չունենայիք, ի՞նչ պիտի ուսումնասիրեին ու երբեմն էլ՝ թալանեին: Դուք ձեր պատմությունն եք ստեղծել:

Քիչ ուշ հասկացա, որ պետք է փոխեմ խոսակցության թեման: Եվ շարունակեցի հարցերիս տարափը:

-Հետաքրքիր է, իսկ որտե՞ղ են բնակվում այս հասարակ մարդիկ:

-Իսկ ինչու՞ պետք է նրանք որևէ տեղ բնակվեն: Նրանք նվիրաբերվել են իրենց փարավոնին:

-Բայց ինչպե՞ս կարողացան այդ մարդիկ, որոնք անգամ իրենց անունը գրել չգիտեն, չունեն սեփական ազատություն ու սեփական կյանքի վրա իրավունքներ էլ չունեն, հաղորդագրություն ուղարկել այլմոլորակայիններին: Մի՞թե նրանք տիրապետում են այսօրվա հեռահաղորդակցության միջոցներին, թե՞ ֆեյսբուքյան ընկերներ են Հայկի համաստեղության բնակիչների հետ: -Ասացի ու, միաժամանակ կծեցի լեզուս: Ախր ինչու՞ չգիտեմ լեզուս ինձ քաշել կամ խոսքս բերանումս պահել: Չգիտեմ:

-Չեմ ուզում հասկանալ, թե այդ ինչ բառեր օգտագործեցիր դու քո շաղակրատանքի վերջում, բայց մեր գլխավոր քուրմը խոսում է Աստվածների հետ, և քուրմերն են ուղարկել օգնության կանչը:

-Ա՜, ա՜, հասկանալի է: Բայց, կարծում եմ, որ այս հսկաներն իրենք են տեսել ու հասկացել և իրենք էլ սովորեցնում են իրենց գիտելիքները երկրաբնակներին: Ոչ թե ձեր գլխավոր քուրմն է կապ հաստատել: Չէ, չէ մի: Ինչ էլ հնարել եք՝ գլխավոր քուրմը խոսել է Աստվածների հետ, - իմ խոսքում լսվեց ակնհայտ ծաղր ու արհամարհանք:

-Ի՞նչ, - բղավեց փարավոնը:

-Ես... ոչինչ չասացի, ձեր քուրմերը ամենակարող են, չէ՞ որ անգամ երկրաշարժ ու խավարում, աշխարհի վերջ են գուշակում: Իսկ ես էլ կարող եմ ասել, որ Պիզայի աշտարակի թեքվելու պատճառն այն էր, որ այս հսկաներից մեկն առանց մտածելու, արմունկով հենվել է աշտարակի տանիքին ու մի ձեռքով էլ սուրճի բաժակը բռնած՝ սրճել է:

Սա վերջն էր: Ես լցրել էի փարավոնի համբերության բաժակը:

Փարավոնի աչքերը կլորացան, նա ուղղվեց իր դիրքից, կանգնեց երկու ոտքերի վրա, ոչ թե ձեռքերի, ու՝ բարձրացրեց ձեռքը... Հետաքրքիր է, նա մեր ամբողջ խոսակցության ընթացքում խոսում էր գլխի վրա կանգնած...

Նրա ձեռքը բարձրացնելուն պես, միաժամանակ, միանգամից, վազքով նրան մոտեցան ծառաները, որոնք կանգնած էին ոչ հեռու, իսկ ես նրանց չէի նկատել: Մինչ նրանք կխոնարհվեին և կլսեին հրամանը, որը կարտաբերեր իրենց փարավոնը, հասցրեցի ասել կարևոր բառերը:

-Արմա... անամա... միմիա... դեն..., - ահա, արդեն երկրորդ անգամ, ինքս ինձ փրկեցի. ախ, այդ թագավորները, ի~նչ դժվար է նրանց հետ: Հայտնվեցի նավահանգստում, օդապարիկիս կողքին. այն արդեն նորոգել էին և այնպես, որ նորից չէր տարբերվում: Նայելով շուրջս նկատեցի, որ սա այն նավահանգիստը չէր, որտեղ պահ էի տվել օդապարիկը: Այստեղ ավելի շատ են արմավենիները, ու ավելի խոնավ է բնությունը: Եվ սա էլ Կարմիր ծովը չէ: Իսկ այդ ինչպե՞ս պատահեց, որ առանց ինձ նախազգուշացնելու, ինքն իրենով, օդապարիկը տեղափոխվել էր, և միայն հետո ես եկա: Ստացվում է, որ օդապարիկս էլ է հրամաններ տալիս:

ԻՄ ՀՈԳԵՎՈՐ ԸՆԿԵՐԸ

-Օho՜- աչքերիս չեմ հավատում, մի՞թե... Ոչ, չի կարող պատահել, այդ էլ ու՝ վերջ:

Նայում եմ՝ ինձ է մոտենում բարձրահասակ, հոգևորականի հագուստով, դեղնամորթ ծերունի: Նա մի ձեռքով հենված է ձեռնափայտին, իսկ մյուս ձեռքում կոկոս է: Նա ինձ է մեկնում ձեռքի կոկոսը:

-Ես շատ եմ սիրում շոկոլադը, որի մեջ լցված են կոկոսի մանրած հատիկներ:

Ծերունին լուռ ինձ է մեկնում ձեռքը, որում կոկոսն է: Այդ գրեթե նշանակում է, որ պարտավոր եմ վերցնել:

-Սա ի՞նչ է, - հարցնում եմ, թեև պարզ տեսնում եմ, որ այն կոկոս է: Մի պտուղ, որը թեև չեմ համտեսել, սակայն տեսել եմ գրքերում և ֆիլմերում: Հա, մեկ էլ ասացի, որ կոկոսով լի շոկոլադ եմ սիրում: Ես չեմ հրաժարվում հյուրասիրությունից, մեկնում եմ ձեռքս և վերցնում պտուղը: Ինչ կա որ, մարդ է, հյուրասիրում է, ուրեմն կարելի է վերցնել: Հուսով եմ, սա նման չի լինի իմ այն երկու թագավորների հետ ունեցած հանդիպումներին: Բայց, դե ինչպես պարզվեց, կոկոսը ջարդել չեմ կարող: Տանջվեցի, տանջվեցի, հիշեցի այն հայկական հեքիաթը, որում մուկը մտնում է կոկոսի մեջ ու չի կարողանում դուրս գալ, և ծիծաղեցի: Այս պահին ես այդ մկան նման էլ չեմ: Այն մեր հայ մուկը ցեթ գտավ մի անցք և դրա միջով ներս մտավ, իսկ ես ոչ կարողանում եմ կոտրել, ոչ էլ մուկ եմ: Ծերունին հասկացավ իմ ծիծաղի ու տանջանքի պատճառը: Նա ձեռքիցս վերցրեց կոկոսն ու անմիջապես, առանց չարչարանքի, անցք բացեց կոկոսի վերնամասում: Փորձեցի խմել, զարմանալի էր,

խմել հնարավոր չէր: Մարդը քարով խփեց կոկոսին, այն ջարդվեց, իսկ ներսից դուրս թռավ սպունգանման զանգված ու՝ սկսեց փախչել: Ապա՝ թռչկոտել ու պտտվել մեր շուրջը: Ի՞նչ անեմ, ահա քեզ և մի նոր պատմություն: Որոշեցի բռնել այդ արարածին: Վազեցի սպունգի հետևից: Լավ էլ արագ էր վազում: Վերջապես հաջողվեց բռնել: Այն կպավ մատներիս, իսկ մատներս կպան նյութին ու մաշկս անմիջապես դարձավ թափանցիկ, գրեթե՝ անտեսանելի: Քիչ անց իմ ամբողջ մարմինն անհետացավ: Միայն չէի հասկանում՝ միայն ե՞ս էի այդպիսին, թե՞ նաև ինձ անտեսանելի էր տեսնում ծերունին: Որովհետև նրան դեռ տեսնում էի, միայն ինքս ինձ չէի տեսնում:

-Այս ի՞նչ հրաշք էր, - զարմացած հարցրեցի:

-Մեր երկրում մարդիկ այդպես են ընդունում հյուրերին: Դա հյուրընկալության նշան է: Եթերային լինելը երկնային է, աստվածային:

-Բայց, անկեղծ ասած, զարմանալի է: Իսկ, ի՞նչ պիտի լինի սրանից հետո: Ես քաղցած եմ: Ավելի հաճելի կլիներ, որ կոկոսը խմեի:

-Երբ մարդն անտեսանելի է, կարող է սրտի ուզածն անել: Նրան չեն տեսնում և չեն արգելում, - գլուխը խոնարհելով պատասխանեց ծերունին:

-Բայց ես չեմ ցանկացել անտեսանելի դառնալ, այ օրինակ, շատ երեխաներ երազում են անտեսանելի դառնալ: Գաղտնի գնալ բակ, կամ շոկոլադ ուտել, որ ոչ ոք չտեսնի: Որ չասեն՝ չի՛ կարելի, չի՛ կարելի: Բայց երևի վախկոտ եմ, ու ավելի լավ է մայրիկս ասի՝ չի՛ կարելի... Կարոտեցի մայրիկիս: Հիմա, նա ինձ կփնտրի ու չի գտնի: Հետո էլ ասում եմ, թե չեմ ցանկանում անտեսանելի լինել, հապա, սա ի՞նչ է, որ արել եմ: Չէ՞ որ մայրիկս չգիտի իմ ճանապարհորդության մասին: Ես արդեն անտեսանելի վիճակում էի, հիմա էլ իսկական անտեսանելիությունն ինձ պարուրեց:

-Մենք կգնանք ափ: Ափին կան մարդիկ, որոնք մարգարիտներ են հանում օվկիանոսի հատակից: Եթե ցանկանաս, միայն կնայես, իսկ եթե ցանկանաս, դու էլ կիջնես օվկիանոսի հատակ և ինքդ կհանես խեցին, որի մեջ ապրում է մարգարիտը:

-Օ՜, հիասքանչ է, - բացականչեցի հիացմունքից, չէ՞ որ այդ ամենահիասքանչ ու հետաքրքիր արկածներից մեկը կլինի: -Իսկ երկա՞ր պետք է մնամ այսպես անտեսանելի, - համենայնդեպս հարցրեցի մարդուն:

-Լավ կլինի, որ դու հետո այն օգտագործես, երբ կգնանք չինական կայսրի պալատ, որպեսզի քեզ չտեսնեն թիկնապահներն ու ծառաները, անգամ կայսրուհին չպետք է տեսնի, նա շատ դաժան ու անհանդուրժող է գեղեցիկ աղջիկների ու կանանց նկատմամբ:

-Կրկի՞ն այդ պալատներն ու թագավորները, քիչ էր մնում գլխիցս զրկվեի, հիմա էլ՝ այստե՞ղ: Լավ, չեմ հասկանում, արդյոք չե՞ն կարող այդ թագավորներն առանց կախելու հրամանի ապրել, մի՞թե այդքան դժվար է:

-Այդպես միայն հասարակ մարդիկ կարող են, իսկ նրանք իրենց ազահությունն ու դիզած գանձերն են փրկում:

-Ուրեմն ես հնարավորություն կունենամ զրուցելու կայսրուհու հե՞տ: Բայց նրանք համառ են, ինքնահավան ու անխիղճ: Նոր ոչինչ չեմ տեսնելու ու լսելու:

-Կորոշես հանդիպումից հետո. թե ի՞նչ կտա այդ հանդիպումը, միայն ժամանակն է որոշում...

-Ժամանակը... - ես հիշեցի մեր զրույցը Վանի հետ, այնուհետև շարունակեցի, - լա՛վ: Գնացինք: Թող այդպես լինի: Միևնույն է, որոշել եմ շրջել աշխարհով մեկ, ինչ լինում է թո՛ղ լինի, ծայրահեղ դեպքում՝ կօգտագործեմ կախարդական բառերը: Թեև, հարց ունեմ ձեզ. որտեղի՞ց իմացաք իմ մասին և որ՝ պետք է ինձ օգնեք:

-Երբ դու ասում ես կախարդական բառերը, գոյություն ունի մի ոլորտ, որտեղ դրանք իրագործվում են, այսինքն ապրում են արարածներ, որոնք իրագործում են կախարդական բառերով արված խնդրանքները, այ այդ ոլորտում էլ ապրում եմ:

-Այսինքն դու Ջին ե՞ս:

-Կարելի է և այդպես ասել: Գնացինք: Բայց սկզբում մենք մարգարիտներ որոնողների մոտ կգնանք:

-Իսկ օդապարի՞կս:

-Նրան ոչինչ չի լինի, պաշտպանված է:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՏԵ՞Ղ Է ԱՊՐՈՒՄ ՄԱՐԳԱՐԻՏԸ

Երկուսով գնացինք օվկիանոս: Ափին հավաքված էին մարդիկ, որոնք, որքան հասկացա, հենց մարգարիտ որոնողներն էին: Նրանցից երկուսը սպիտակ էին հագած: Եվ ամենազարմանալին այն էր, որ նրանց մեծ մասը հասակավոր կանայք էին: Միմյանց հետ զրուցելուց հետո նրանք մտան ջուրը: Իհարկե, նախօրոք դնելով դիմակները, որոնցով շնչում են և պաշտպանում աչքերը ջրից: Քիչ հետո նրանք դուրս եկան՝ իրենց հետ բերելով ափաչափ խեցիները: Հետաքրքրությունից բոլորս վազեցինք և շրջապատեցինք լողորդներին: Նրանք հանեցին դիմակները: Կանանցից մեկը, հանելով դիմակը, նստեց անմիջապես ափին, ավազի վրա: Մենք շրջապատեցինք նրան: Ինչ-որ մեկը դանակ տվեց լողորդին: Նա վերցրեց, ապա դանակի սուր ծայրով սկսեց ճեղքել խեցին: Այն ամուր էր ու լպրծուն: Բայց նրան դա բոլորովին չէր խանգարում. անընդհատ ձեռքում սեղմելով ու հարմար տեղավորելով, լողորդը վերջապես ճեղքեց ու բացեց խեցին: Փոքրիկ ճամպրուկի նման այն բացվեց: Դեռ նոր էր բացվել, արդեն երևում էր խեցու պատերի արծաթափայլը, ապա բուն խեցու բնակչի մսային զանգվածը, որի մեջ նշմարվում էր թանկագին քարը մարգարիտը: Դանակի ծայրով հեռացնելով լպրծուն փափկամիսը, լողորդը մատների ծայրով դուրս հանեց փոքրիկ, կլորավուն, գեղեցիկ փայլով մարգարիտը:

-Դե, ցանկանու՞մ ես դու էլ մտնել օվկիանոս, - հարցրեց ծերունին, որն իմ Ջինն էր:

-Բայց ես լողալ չգիտեմ, - պատասխանեցի:

-Ոչինչ, մի անհանգստացիր, մենք քեզ կօգնենք, դու կապված կլինես պարանով, միայն լողազգեստ կհագնես և կդնես դիմակը՝ պաշտպանվելու համար:

Ինձ համար լողազգեստ բերեցին: Ես հագա: Ապա մտածեցի, թե ինչու՞ է սպիտակ, և չկարողանալով զսպել հետաքրքրությունս՝ հարցրեցի.

-Ինչու՞ է այն սպիտակ:

-Շնաձկները չեն սիրում սպիտակ գույնը: Նրանք չեն մոտենում սպիտակազգեստ լողորդին:

Այո, հետաքրքիր է, խե~ղճ շնաձուկ, մտածում է, որ ինքն ամենախելացի ու ամենաահարկու ձուկն է, բայց խաբում են հասարակ ձևով: Ինչևէ, հագնվեցի և դնելով դիմակս, քայլեցի դեպի ջուրը: Լողորդը կապեց ինձ և ամրացրեց նավի եզրին, նաև՝ իրեն, ինչպես լեռնագնացներին են կապում: Մենք մտանք ջուրը: Երբ արդեն ջուրը ծածկեց գլուխս, սկսեցի ձևացնել, թե լողում եմ. իհարկե, նաև պարանն էր օգնում գնալու այն ուղղությամբ, որով տանում էր լողորդը: Շուրջս մանրիկ ձկնիկներ էին լողում: Նրանք կպնում ու հեռանում էին: Հասանք գրեթե հատակին: Մտածեցի ի՞նչ քիչ էր խորությունը, բայց երևի ինձ էր թվացել: Ջրամամուռների ու քարերի արանքում, հատակի ավազի մեջ մի քանի խեցի գտանք, մեկն էլ ես վերցրեցի, և լողացինք դեպի դուրս: Անհավանական զգացումներ ապրեցի. և՛ վախի, և՛ ազատության, թեև գտնվում էի ջրի տակ, և՛ հետաքրքրության: Մոռացել էի, որ լողալ չգիտեմ և զարմացած էի: Երբ դուրս եկանք ափ, հանեցի դիմակս: Հետաքրքիր էր՝ ի՞նչ կար այն խեցու մեջ, որը հանել էի ջրի հատակից: Ծերունին մոտեցավ ու հարցրեց.

-Բարեհաջո՞ղ է որսը, թե՞ չես կարողացել:

Ես ցույց տվեցի ձեռքիս խեցիները: Որովհետև գիտեի, որ չեմ կարողանալու բացել խեցիները, չշտապեցի վերցնել մեկնած դանակը: Խեցին տվեցի ծերունուն: Նա վարժ ճեղքեց խեցին դանակով, որի ներսում, փափկամսի տակ նշմարվեցին մարգարիտները: Հրճվեցի: Չէ՞ որ այդ երկու հատիկ մարգարտի համար գրեթե վտանգել էի կյանքս, մտել էի ջուրն իմանալով, որ լողալ չգիտեմ: Հանկարծ ինքս իմ նկատմամբ հարգանք զգացի: Պարզվում է՝ այնքան էլ վախկոտ չեմ: Այսինքն՝ անվախ եմ: Մյուս խեցին ինքս բացեցի: Լպրծուն փափկամարմնի հպումից տհաճություն զգացի, բայց արդյունքն այնքան հրապուրիչ էր, որ զզվանքս միանգամից հաղթահարեցի: Մարգարիտներն ուսումնասիրելուց հետո դրանք սեղմեցի ափիս մեջ: Ասում են, որ կա և սև, և ոսկեգույն մարգարիտ: Դրանք շա~տ գեղեցիկ են:

Մենք հանգստացանք ափամերձ բամբուկե հյուղակում: Ամեն ինչ բնական էր, հյուսված բամբուկից: Մեզ հյուրասիրեցին բանան և կրակի վրա արագ տաքացված կակղամորթեր, որոնցից այդքան տհաճություն էի զգացել: Բայց, ասում են, տրված

մարդն ամեն ինչ ուտում է: Ահա այդ սկզբունքով էլ, առանց քննելու անուշ արեցի: Պարզվեց, որ շատ էլ համեղ են փափկամարմինները:

ԿԱՅՍՐՈՒՀԻՆ

Երբ արդեն սնվել էինք ու հանգստացել, իմ պահապանն առաջարկեց գնալ կայսրի պալատ:

-Այ, հիմա անհրաժեշտ է, որ դառնանք անտեսանելի. կայսրուհին չի սիրում գեղեցիկ աղջիկներին:

-Ինչու՞, - զարմանքով հարցրեցի ես:

-Չգիտեմ, ինքդ նրան կհարցնես, եթե պատասխանի, ուրեմն կիմանաս, - ասաց նա:

-Իսկ ես համոզված եմ՝ գիտե՞ք պատճառը:

Մենք պետք է ծածուկ մուտք գործեինք կայսերական պալատ: Ուղղվեցինք կայսերական այգիների կողմը: Անցանք դարպասի պահակազորի կողքով: Թե ինչու՞ էի գնում չինական կայսրուհուն այցելության, այն էլ՝ գիշերով, չգիտեմ: Պահակները քնած էին, բացի այդ, մենք անտեսանելի էինք: Մեր ընկեր «Կոկոս սպունգը», հիանալի միջոց էր անտեսանելի դառնալու համար: Այգում, որի ճեմուղին տանում էր ննջասենյակ, հնարավոր չէր առանց լույսի, և մենք մոմ վառեցինք: Մթության մեջ չէինք երևում, երևում էր միայն մոմի լույսը: Թվում էր՝ մոմի լույսը գնում է առանց հենարանի, առանց օգնության: Մանր, անթիվ-անհամար աստիճանները բարձրանում էին վեր:

-Ո՞վ է հնարել ննջասենյակ տանող այսքան աստիճան: Ա~խ, հա, հասկանում եմ, մտածել են, որ մինչև վերջին աստիճան բարձրանալը դժվար է, և ով բարձրանա՝ կհոգնի, և անկողին մտնելն ու քնելը մեկ կլինի:

Ջինը ժպտաց: Մթության մեջ չտեսա նրա անտեսանելի ժպիտը, միայն զգացի:

Մեր բախտից բոլորը քնած էին, իսկ թե քնած չլինեին, որևէ մեկն անպայման կլսեր մեր շնչակտուր հևոցն ու կտեսներ մոմի թույլ լուսավորումը, երբ հասանք վերջին աստիճանահարթակին: Բարեհաջող հասանք ննջասենյակ, ուղեկիցս բացեց դուռը: Դուռը փական չուներ, այն բացվում էր պատի երկայնքով առաջ ու հետընթացով: Նախքան դուռը բացելը մոմը հանգցրել էինք: Օդում տարածվել և զգացվում էր հոտավետ նյութի հոտը, որով պատրաստվում է մոմը: Ոտքերիս մատների ծայրերին հենվելով՝ զգուշորեն գնացի դեպի վարագույրը: Թաքնվելու ցանկությունն անգամ անտեսանելի վիճակում առկա էր: Ես պահվեցի վարագույրի հետևում, իմանալով հանդերձ, որ անտեսանելի եմ: Սենյակում համաչափ խռմփոց էր լսվում: Հանկարծ կայսրուհին, որը հանգիստ խռմփացնում էր, նստեց անկողնում և մթության մեջ շուրջը նայեց: Հիմա կհարցնեք՝ այդ ինչպե՞ս տեսա, որ նա շուրջն է նայում: Նրա

գլխին դրված գիշերագլխարկը թեքվում էր այս ու այն կողմ: Նրա ողջ մահճակալը տարօրինակ ճերմակ էր և թույլ, գեղեցիկ կաթնաթույր լույս ուներ: Իսկ ես, կամքիցս անկախ, սկսեցի փռշտալ: Ոչ մի կերպ չէի կարողանում լռեցնել քիթս: Ինչ-որ փոշի էր լցվել, և քիթս որոշել էր ինձ մատնել: Հետո էլ կասեք՝ լրաբզիկը տանից է լինում: Կայսրուհին սկսեց յուրջ անհանգստանալ, ապա բարկացած հարցրեց.

-Ո՞վ կա այստեղ:

Ես շունչս պահած լռում էի: Իսկ նա շարունակեց խոսել .

-Ո՞վ է համարձակվել հանգիստս խանգարել:

Որոշեցի, որ նա պատասխան չստանալով կրկին կքնի, բայց, հասկացա, որ նա բոլորովին էլ մտադիր չէ քնելու, նստել է և անընդհատ խոսում է ինքն իր հետ: Այդ պահին կամ պետք է պատասխանեի, կամ թե՝ զգույշ դուրս ելնեի սենյակից: Բայց, այ քեզ պահ, մի ուրիշ ժամանակ չեմ փռշտա, իսկ հիմա, երբ հարկավոր չէ, նույնիսկ անհրաժեշտ է, որ զսպեմ ինձ, այն կրկնվում է: Քիթս քոր է գալիս և... ես մի անգամ էլ փռշտացի:

-Ո՞վ է, - հարցրեց ու արդեն փռշտոցի ուղղությամբ սպասում էր պատասխանի:

-Ես եմ այստեղ:

-Ձայնդ անծանոթ է. ո՞վ ես, ինչու՞ ես այստեղ. եկել ես ինձ...

Նա չհասցրեց արտաբերել վերջին բառը, երբ ես պատասխանեցի.

-Եկել եմ ապագայից, - ասացի, բայց և միաժամանակ հիշեցի իմ նույնանման բառերի ազդեցությունն ու հետևանքները, և այն էլ մի քանի անգամ: Մի՞թե չեմ խրատվում, այ քեզ բնավորությու՜ն... Մի՞թե պատահածներից չէի խրատվել, որ այստեղ չգայի:

-Քնա՞ծ եմ, գուցե... թե՞ իմ մեղքերի արդյունքն է, որ ձայներ եմ լսում: Ապագայի այցելուն պետք է, որ ինձ մեղադրելու համար եկած լինի, - կայսրուհու ձայնը դողաց:

-Իսկ ո՞րն է քո մեղքը: -Հարցրեցի անկախ իմ կամքից, այսինքն պահը թելադրեց: Եթե քիչ մտածեի, չէի հարցնի. չէ՞ որ նա կայսրուհի էր: Բայց երբ որոշեցի մտածել, հասկացա. չէ՞ որ նա ինձ չի տեսնում, ես անտեսանելի եմ, և ինչու՞ պետք է չօգտվեմ իմ այդ հնարավորությունից: Եվ ես իսկապես համարձակություն ստացա իմ այդ տեսքից:

-Դուք մեղքե՞ր ունեք,- կրկնեցի հարցս՝ մի փոքր ձայնիս խորհրդավորություն տալով:

-Գահը: Իշխանություն շատ եմ սիրում: Շատ եմ սիրում իշխել: Անվերջ հարուստ լինելու մոլուցքն ինձ կուրացրել է:

-Չեմ հասկանում: Մի՞թե ձեզ պարտադրում են լինել կայսրուհի:

-Չեն պարտադրում: Ե՛ս եմ ինձ պարտադրել: Բայց ոչ, ինձ պարտադրեցին սկզբում: Ամենա... ամենասկզբում, երբ ինձ փախցրեցին իմ ծննդավայրից:

-Ինչպե՞ս ..

-Դե~... երկար պատմություն է, - շարունակեց կայսրուհին:

-Հետո ինչ, մենք ժամանակ ունենք, այսինքն ես և՛ ժամանակ, և՛ համբերություն ունեմ՝ ձեր պատմությունը լսելու, - հանգիստ բացատրեցի, իմանալով, որ եթե եկել եմ, ուրեմն պիտի դիմանամ մինչև վերջ:

Իսկ կայսրուհին, գուցե և չնկատելու տալով ներկայությունս՝ շարունակեց խոսքը.

-Կայսրի հարեմի համար աղջիկներ էին փնտրում: Ասեմ, որ նրանք ծագումով պետք է լինեն ազնվատոհմ ընտանիքից: Իսկ ես, աղքատ ընտանիքի աղջիկ լինելով, այնքան գեղեցիկ էի, որ զինվորները հմայված չմտածեցին իմ դիրքի ու ունեցվածքի մասին: Փախցրեցին ու բերեցին պալատ: Ծնողներս... Նրանք նույնիսկ չիմացան պատահարի մասին: Անգամ չեմ հիշում մորս դեմքը...

-Իսկ ես չեմ կարող առանց մայրիկիս, կարոտեցի...

Կայսրուհին հանկարծ սկսեց լաց լինել: Սենյակի մթության մեջ բարձր հնչում էր նրա հեծկլտոցը: Խավարում, այդ հեծկլտոցը շատ հուզիչ էր: Թեև ինձ համար անգամ դա էլ բավական էր, որ նրա նկատմամբ խղճահարություն զգայի: Պատուհանից նրա ուսերին էր ընկել լուսնի լույսը, և նրա ձերմակ ուսերը ցնցվում էին մեղմ լույսի տակ:

-Կայսրուհիներն ամենազոր են: Ամեն ինչ կարող եք ուղղել, - փորձեցի մխիթարել նրան:

-Այլևս ոչինչ հնարավոր չէ ուղղել: Վերջն է: Այն ժամանակ տասնվեցամյա աղջնակ էի՝ գեղեցկուհի: Պալատում սենյակս ամենածայրում էր, և երիտասարդ կայսրը երբեք էլ չէր նայի իմ սենյակի կողմը: Իսկ ես հասկացել էի, որ ամենազորը հարստությունն է, այն ոսկին, որը տալիս էին ամենօրյա ծախսերի համար, որ հագուստներ գնեմ: Հավաքեցի ոսկին և մի օր տալով ծառային, ·խնդրեցի, որ կայսրին ուղեկցի իմ սենյակի կողմը: Ամբողջ ընթացքում սովորել էի գեղեցիկ երգել ու նկարել: Կայսրը լսում է երգս ու հրամայում իր մոտ ուղեկցել այդ գեղեցիկ ձայնով աղջկան: Նրանք ինձ օծեցին անուշահոտ յուղերով և փաթաթեցին նուրբ փետուրներով: Կայսրը հմայված էր իմ գեղեցկությամբ:

Կայսրուհին լռեց, սրբեց արցունքները: Նա չէր մտածում, որ պատմում է որևէ մեկին, նա խոսում էր ինքն իր հետ: Եվ շարունակեց՝ նայելով դիմացի պատին:

-Կայսրին որդի էր հարկավոր, իսկ պարզվեց, որ չեմ կարող հղիանալ: Արեցի ամեն հնարավորը: Գողացա մի ծառայի որդու: Եվ ցույց տվեցի կայսրին, ասելով, որ իր որդին է: Բոլոր գեղեցիկ աղջիկները, որոնք հնարավոր կայսրուհու դերում էին հայտնվում, իմ հավատարիմ ծառաների օգնությամբ զրկվում էին կյանքից: Կայսրի կողքին միայն ես էի: Ուրիշ ոչ ոք: Շուտով հայտնվեցի թագավորական բոլոր հանդիպումներում, քաղաքական գործարքներում: Անցան տարիներ: Կայսրը մահացավ: Այլևս ոչ ոք չէր կարող մոտ գալ գահին: Այն իմն էր: Չխնայեցի անգամ տղային, որին մեծացրեցի որպես արքայազն: Նա պետք է խանգարեր իր

ժառանգորդ լինելու հայտով: Այսինքն, նա չպետք է կայսր լիներ, որի համար ընտրվել էր դեռ մանկուց և մեծացել պալատում:

-Դուք սարսափելի եք: Ինչպե՞ս եք կարողացել... Իսկ ձեր խիղճը... Չի՞ տանջել:

-Լռի՛ր: Չա՛յն: Դու ո՞վ ես, որ ինձ մեղադրես: Ինձ երբևէ, ոչ ոք չի՛ մեղադրել: Ոսկին ամենազոր է: Ինձ հասկանալի չէ՝ ինչ է խիղճը: Թեպետ առաջին անգամ եմ այն զգում և նրա մասին մտածում: Անգամ չգիտեմ, թե ինչու՞ հանկարծ այս մտքերը սկսեցին ինձ տանջել: Գիշերվա այս ժամին... Այդ դու՛ ես մեղավոր: Դու՛ սկսեցիր այս խոսակցությունը: Ես երբեք հետ չեմ նայել ու չեմ մտածել նրանց մասին, որոնց օգնությամբ դեպի գահ եմ գնացել: Քառասունյոթ տարի է արդեն իմ բացարձակ իշխանությունն է տիրում այս երկրում:

-Այդ ի՞նչ փոշի է, որի մեջ պառկած եք:

-Մարգարտի փոշի: Նրանք ամեն օր ինձ համար մարգարիտ են հավաքում, մանրում, ու բերում, որ իրենց կայսրուհին երիտասարդ մնա. փոշին երիտասարդացնում է:

-Ես դրանից էի փռշտում:

-Ընտելացել եմ, հարմարվել. կար ժամանակ՝ ես էլ էի փռշտում: Հարկավոր է: Բայց արդյո՞ք հոգիները փռշտում են:

-Գուցե... Չգիտեմ: Ուրեմն, այո', փռշտում են: Չէ՞ որ ես փռշտում եմ: Բայց ասեմ, որ ճիշտ է, ապազգային եմ, բայց հոգի չեմ: Ապրող մարդ եմ: Հիմա և հիացած եմ ձեր հզորությամբ, կամքի ու մտքի ուժով, բայց և... լավ է ոչինչ չունենալ, քան դահ բարձրանալ մարդկային կյանքերի գնով: Իմ երկրում, իմ հայրենիքի պատմության ընթացքում, չեմ հիշում, որևէ կին կայսրուհու. ասում են եղել են այլ երկրներում հայ կայսրուհիներ: Մենք ունեցել ենք հզոր հայ թագուհիներ, որոնք պայքարել են հայրենիքի ազատության համար: Նրանց շնորհիվ իմ հայրենիքն ապրել է դարերով. անգամ երբ չի ունեցել պետականություն: Նրանք պահել են ժողովրդի ոգին: Հայ մայրերն անապատի կիզիչ արևի տակ հայոց տառերն են դաջել այրվող ավազին, երբ շուրջը բռնեների ոռնոցն էր իշխում, և անապատում երեխաները տեսել են, թե ինչպես է հայոց բառը վերընձյուղվում: Այ, իմ ժամանակաշրջանում անգամ հասարակ տասնվեցամյա աղջիկը կարողացել է կյանքի գնով օգնել ու փրկել հայրենին պաշտպանող զինվորին, նա փամփուշտ է հասցրել ճակատ, առաջին գիծ, այնտեղ, որտեղ զինվորները կռվում ու զոհվում էին և մնացել էին առանց փամփուշտի, և ինքն էլ զոհվել է մարտի դաշտում:

Եվ ես ափսոսանքով պատմում էի արդեն ոչ թե կայսրուհու համար, այլ հիշում էի այն հերոսուհուն, որին ծնել էր իմ ազգը: Չայնս մութ սենյակում տարածվում էր, իսկ կայսրուհին լռել էր, չէր խանգարում: Ներքին զգացողությամբ վստահ էի, որ նա ցանկանում է լսել և լսում է: -Չգիտեմ: Դուք զոհել եք կյանքեր և չեք ճանաչել հասարակ մարդկանց աղքատությունը: Անգամ քնում եք մարգարտափոշու մեջ, որ երկար ապրեք: Հանուն ինչի՞...

-Եթե դու մարդ լինեիր, արդեն ողջ չէիր լինի:

Այո, ես հասկացա, որ այլևս չեմ ցանկանում լսել այդ հղփացած ու անմարդկային կնոջ ձայնը: Լուռ դուրս եկա: Նա դեռ խոսում էր: Մթության մեջ լսվում էր կայսրուհու պատասխան փնտրող ձայնը: Դրսում սպասում էր իմ Ջինը: Նա ինձ ուղեկցեց նավահանգիստ:
Ինձ թվաց, թե մի քանի տարով մեծացել եմ: Ծանր զգացողություն էր հոգումս և... անսովոր: Սիրտս տնքում էր:

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

Վանը մենակ էր մնացել: Մոռացել էի նրա մասին: Մտածեցի, որ վատ ընկեր եմ: Ընկերները չեն մոռանում միմյանց, մանավանդ դժվար իրավիճակներում: Իսկ նա ինձ սպասել էր ու կարոտել: Երբ հայտնվեցի նավահանգստում, տեսա՝ ինչպես է խաղում ձկնորսի հետ: Ձկնորսը, ձուկը բարձր պահած, կանչում էր ու թափահարում այն: Վանը սպասեցնել չէր տալիս, վազում էր ու ցատկում վեր, ձկնիկին հասնելու համար, իսկ ձկնորսը ձեռքն ավելի էր բարձրացնում, և Վանը գեղեցիկ ցատկ էր կատարում, օդում պտտվում, դունչը վեր նայում ու հետո կրկին ցատկում, վերջապես բռնում էր ու վազում հաղթական՝ իր ավարն ուտելու: Ես հասկացա, որ նա արդեն համտեսել է օվկիանոսի բոլոր ձկնատեսակները և կուշտ է, բայց ինձ տեսնելուն պես թողեց խաղն ու վազեց, փաթաթվեց, քսմսվեց ոտքերիս: Վեր նայելով՝ փորձում էր հասկանալ իմ բացակայության պատճառը, ուսումնասիրում էր տրամադրությունս ու պատասխանի սպասում: Ի զարմանս ինձ, նա ոչ մի բառ չէր ասում, անհասկանալի էր, չէ՞ որ նա խոսել գիտեր:
-Է՜... է՜, իմ ընկեր, եթե միայն իմանայիր, թե ինչ ապրումներ ունեցա՝ լսելով այս երկրի ամենահարուստ ու թվացյալ ամենաերջանիկ մարդուն: Անգամ գազաններն իրենց այդպես չեն պահում, թե՞...

Նայեցի կենդանու խելացի աչքերին, նրանք փոխադարձաբար ինձ էին նայում:

-Արի գնանք մեր երկիր, այլևս ոչինչ չեմ ուզում:

Ափին, ավազներին նստած, գլուխս ափերիս մեջ առած՝ նայում էի հորիզոնին. թույլ ալիքները խաղում էին ոտքերիս ու եզրի մանրիկ ավազի հետ: Վանը պտտվեց գրկումս, որոշ ժամանակ նստեց. իր փափկամազիկ մորթով խուտուտ տալով, ապա թողեց ինձ, երևի ձանձրացավ ու գնաց, հեռվում նստած ինքն իրեն էր հարդարում: Նա բոլորովին չէր սիրում թրջվել: Մինչդեռ ափին մոտ քամին երբեմն մանր ջրահատեր էր ցանում վրաս: Հորիզոնը խաղաղ էր: Ուղիղ գիծ:
Որորները ջրի վրա ճչալով որս էին անում: Մի քանիսը զուգե հոգնելով իջնում էին ափի մանրավազին, քայլում թռչկոտելով: Վանն այդ տեսնելով թողեց ինքնահարդարումն ու սկսեց հետևել որորների քայլին: Թռիչքի պատրաստ: Նրա ճարպիկ մարմինը մի ցատկով հասավ նշանակետին, սակայն թաթերի մեջ մնացին միայն մի քանի փետուր:

-Հետո ինչ, հոգ չէ, ես քաղցած չեմ, միայն խաղալ էի ուզում, - արդարացավ Վանը, - այդքանն էլ չեք հասկանում:

Վանի ձայնի հնչյուններն ինձ ուրախացրին. այսինքն հեքիաթը շարունակվում է, հարկավոր է միայն պատմել այն: Միայն թե հեքիաթս կրկին փոխվեց:
Չգիտեմ ինչու, հեքիաթս փոխեց իր տրամադրությունը: Այդ հզոր ու անխիղճ կայսրուհին էր պատճառը: Բայց նաև մի դեպք էլ պատահեց, որից շատ տխրեցի: Դուք մտածում եք, որ հանգիստ բարձրացա օդապարիկի զամբյուղ ու շարունակեցի ճամփորդությունս, բայց սխալվում եք. դեռ նոր էր շարժվել օդապարիկը, նկատեցի, որ Վանն այնտեղ չէ: Կրկին ցած իջա, փնտրեցի նրան շրջապատում, ձայնեցի, բայց ապարդյուն: Նա չկար ու չկար: Բայց չէ՞ որ քիչ առաջ իմ կողքին էր: Չէ՞ որ հենց նոր զրուցում էի նրա հետ: Ու՞ր կորավ: Միթե անհետացավ: Մի՞թե ավարտվեց նրա կախարդական ներկայությունն իմ կյանքում ու իմ հեքիաթում: Ահա և մնացի միայնակ այդ հսկայական տարածության մեջ, որտեղ ինձ ոչ ոք չի ճանաչում ու չի հասկանում: Վանի հետ ընկերացել ու խոսում էի, թեև նա կատու էր: Պետք է շարունակեի ճանապարհս: Նա օդ էր դարձել, այնպես ինչպես հայտնվել էր: Հուսահատ բարձրացա զամբյուղ. գուցե նա մոտ ապագայում հետ կգա: Չէ՞ որ գիտի՝ որտեղ եմ: Միգուցե այն ձկնորսը տարավ. նրանք ընկերացել էին: Միասին խաղում էին, միասին ծիծաղում: Չէ՛, Վանը չէր կարող մնալ ձկնորսի մոտ: Եվ որպեսզի հանգիստ լինեմ, որոշեցի գտնել ձկնորսին ու հարցնել: Ձկնորսը, օվկիանոսի ափին նստած, իր ծխամորճն էր ծխում: Նա նայում էր հորիզոնին... Ջուրն ու երկինքը ուղիղ գիծ դարձած լռում էին... Մոտեցա նրան ու հարցրեցի.
-Է՜յ, ձկնորս, կասե՞ք՝ որտեղ է իմ կատուն: Վանը ձեզ մո՞տ է: Գուցե դուք նրան շատ սիրեցիք և որոշեցիք պահել, այնպես որ եթե այդպես է, կհասկանամ ձեզ:

Ձկնորսը զարմացած խոժոռեց դեմքն ու թոթվեց ուսերը:

-Նա այստեղ միայն քեզ հետ էր ընկերացել ու քեզ հետ էլ խաղում էր: Դու ինձանից լավ գիտես կատուների հավատարմության մասին: Նա չէր կարող ինձ լքել, եթե որևէ մեկը նրան չի թաքցրել ինձանից:

-Ոչ, ոչ, - պատասխանեց ձկնորսը, - իսկ ես մտածում էի՝ Վանը չսիրեց ինձ ու հեռացավ՝ առանց հրաժեշտ տալու:

-Ուրեմն նա անհետացել է:

-Անհետացե՞լ է... - զարմացած ու չհասկանալով՝ հարցրեց ձկնորսը:

-Նա այդպիսի սովորություն ունի: Սիրում է անհետանալ և հայտնվել հանկարծակի, անսպասելի:

Պարզվում է՝ ես պատահաբար ասացի մի բան, որն ինձ հույս ներշնչեց. միգուցե Վանը հայտնվի՞ անսպասելի...

Լավ, ավելի լավ է վերադառնամ օդապարիկ:

ԿԱՐՈՏ

Միշտ էլ երբ տխրում ես և, մանավանդ, եթե չունես մտերիմ ընկեր, փորձում ես գիրք կարդալ: Այո, հանկարծ շատ մտերիմ մեկի կարիքը զգացի: Իսկ ինձ մոտ գիրք չկար: Գուցե գրադարան գնամ: Մի՞թե պիտի վերադառնամ՝ կիսատ թողած ժամփորդությունս:

Փորձեցի մտովի պատկերացնել գիրքն ու գրքի հոտը: Պարզվեց՝ եթե չես հիշում մեկ գիրք, այլ հիշում ես որևէ գրադարան, ապա գրքերն ունենում են տարբեր հոտեր: Այն գրադարանը, որն ավելի խոնավ է, այնտեղ գրքերը ներծծում են խոնավություն ու բուրում այդպես: Իմ տան գրադարանն այլ հոտ ուներ: Նրանք իմ գրքերը, հին թղթի հոտով էին բուրում: Իմ մանկության գրադարանը խոնավ էր: Երբ իջնում էի ընթերցասրահ, ինձ դիմավորում էր խոնավությունը, բորբոսի հոտը: Բայց հոգիս լցվում էր կանչող լիությամբ, որն էլ ինձ պահում ու կրկին ու կրկին բերում էր այդտեղ: Այլ էին մանկությանս գրքերը, որոնք անգիր էի անում մորս կարդալու շնորհիվ: Այսպես մտքերով տարված՝ գնում էի, և անհայտ էր, թե ո՞րն է ուղղությունը: Քամին առել էր ծիածանաթև մետաքսն ու հրում էր իր ցանկացած ուղղությամբ: Զամբյուղի ամեն անկյունում տեսնում էի Վանի շարժվող տեսիլքը: Քամու ծայնը սվսվում էր, նմանվում մլավոցի... Աչքերիս առջև երևաց Փոքրիկ Իշխանի քարալիկ, երկար ոտքերով պատկերը, նրա երկար վզնոցն ու փշոտ միայնակ վարդը, որն անպաշտպան կանգնած էր քամու դիմաց...

Ամենակարևորը զգում ես...

-Ու՞ր անհետացար, ինչու՞ անհետացար, ցանկանում եմ՝ վերադառնաս: Չէ՞ որ մարդը պատասխանատու է նրանց համար ում սովորեցնում է, իսկ դու մտածում էիր մարդու նման: Փոքրիկ Իշխանն ասում էր՝ «...բայց դու մի մոռացիր, որ հավիտյան պատասխանատու ես նրա համար, ում ընտելացրել ես...»:

Հետաքրքիր է, Վանի աչքերը ծիածանագույն էին, հիշեցի աշխարհի ամենահսկա ծառի մասին, որը նույնպես ծիածանաթև է: Այո, նվենին, որն աճում է Ֆիլիպինների անտառներում, շատ նման է իմ օդապարիկի մետաքսե հագուստին. նրա կեղևն ունի կապույտ, վարդագույն, մանուշակագույն, կանաչ և այլ երանգներ: Ասում են՝ պատահական ոչինչ չի լինում...

ԱՆՄԱՐԴԱԲՆԱԿ ԿՂԶՈՒՄ

Դուք, կարծում եք, հենց այնպե՞ս հիշեցի այդ հսկա նվենու մասին: Օ՜, ոչ, ես այն տեսնում եմ, հենց հիմա, իմ աչքերով, որովհետև ճոճվում եմ այդ հսկա ծառի ճյուղից կախված: Անգամ երազանքներիս գրկում չէի կարող նստել այսպիսի ճոճանակ: Օդապարիկը կախվել է ճյուղից ու ճոճվում է, պարզ է, որ ես էլ՝ նրա հետ: Երկու ծիածանագույն «թևավորներ» հանդիպել ու, գրկել են միմյանց, իսկ ես պիտի մտածեմ՝ ինչպե՞ս իջնեմ այստեղից: Մի կերպ վեր բարձրացա պարանով և փաթաթվեցի ծառի իրանին: Այո, այն իմ նկարագրածի նման գեղեցիկ էր: Ասես մի

ամուր ծիածան էի գրկել: Կապիկի նման, ճարպիկ շարժումներով ցած իջա: Ջունգլիներում արդեն կայսրուհիների չեմ հանդիպի, ոչ էլ թագավորների, որոնք կանգնում են գլխիվայր: Շրմփալով անձրև էր գալիս: Քանի որ իջել էի իմ թաքստոցից, ուրեմն պետք է նորը գտնեի, իսկ այն այդքան էլ դժվար չէր գտնել: Այստեղ ծառերի տերևներն անեն մեկն ասես մի հովանոց լիներ. կարելի էր հանգիստ մի քանի հոգով թաքնվել: Փորձեցի խցկվել մի տերևի տակ, բայց ամեն կողմից, միևնույն է, քամին բերում էր անձրև, ու ես բոլորովին թրջվեցի: Բոլոր ծառերն էլ գունազարդ էին, ասես կանգնած էի իմպրեսիոնիստ նկարչի կտավի առջև: Նրանք՝ այդ հսկա ծառերը, արմատից մինչ գագաթ գունազարդ էին: Դեղին, կանաչ, նարնջագույն, մանուշակագույն: Գուցե նկարիչներն էլ իրենց երազներում կամ իրենց հնարած հեքիաթներում, մտովի տեղափոխվել էին այստեղ, որտեղ գույները մեկը մյուսին հերթ չտալով՝ շքահանդես են կազմակերպել: Եվ ահա նայում եմ ծառերին, որոնք ասես իջել են Մոնեի կտավներից: Եվ բերանս զարմանքից բաց, ինքս ինձ հարց եմ տալիս.

-Ինչպիսի՞ն կարող են լինել կենդանիները, որոնք ապրում են այս անտառում: Իհարկե, դեռ ոչ մի կենդանու չէի հանդիպել և անգամ վախենում էի այդ մտքից, որ այստեղ, իմ կողքին կհայտնվի մի վագր կամ ընձառյուծ՝ ծիածանային ծածկույթով և ոչ թե կժպտա ինձ, որպեսզի հմայվեմ իր գեղեցկությամբ, այլ միանգամից կհարձակվի և կուլ կտա չգիտես որտեղից ժամանած այս հյուրին և շնորհակալ կլինի ճակատագրից, որն իրեն պարգևատրել է նոր տեսակի «այլերկրային ուտեստով»: Երևակայությունս սպասել չտվեց, միանգամից գծագրեց ծիածանային վագրի կերպարը, և հայացքս սկսեց փնտրել վերջինիս թփերի ու ծառերի հետևում: Ի՞նչ, չէ՞ որ կենդանիները պաշտպանվելու և աննկատ որսի համար ընդունում են իրենց շրջապատի ձևերն ու գույները: Ուրեմն ինչու՞ չպետք է այս կղզու կենդանիներն ու թռչունները լինեն ծիածանային, այնպես, ինչպես ծառերը: Չէ՞ որ, օրինակ կապիկը, որը կբարձրանա այդ հսկա ծառի վրա, ունենալով միևնույն գույնը՝ չի երևա, հանգիստ կքնի, և այն օձը, որը նույնպես կլինի ծիածանային, կբարձրանա՝ սողալով այդ ծառի բունն ի վեր ու չի տեսնի քնած կապիկին: Մնում է ինքս էլ ներկվեմ: Հետաքրքիր է, ինչու՞ այս կղզին բնակիչներ չունի: Միգուցե նրանք գալիս են, հատում ծառերը, որս անում և հեռանու՞մ...

Այսպես մտքերով էի տարված, իսկ օդապարիկը... Օդապարիկս մնացել էր վերևում: Պետք է սպասեի այնտեղ, զամբյուղի մեջ, մինչև անձրևը դադարեր, բայց հետո հիշեցի, որ այստեղ կարող է և անձրևն ընդհանրապես չդադարի: Ավելի լավ է մտածեմ, թե ինչպես պետք է սնվեմ: Որովհետև հոգնած էի ու քաղցած: Չտրորված ու մարդկության անհայտ մացառուտ-թփուտներով ճեղքում-գնում էի՝ որևէ շունչ գտնելու հույսով: Թեև բոլորովին անծանոթ վայրում էի, բայց համոզված էի, որ այստեղ էլ պահպանվում են և գործում հյուրընկալության կանոն-սովորույթները: Եվ հուսով էի, որ ուտելու մասին մտածելը կավարտվի անմիջապես այն պահից, երբ կհանդիպեմ որևէ տեղաբնակի:

Մագլցեցի ծառը: Բարձրից նույնպես շրջապատի որոշ մասն էր տեսանելի: Ծառերը փակում էին տեսադաշտը: Տեսանելի շրջակայքում բնակելի ոչ մի շինություն: Այո, շուրջս մագլցող լիաններ, միջատակեր ծաղիկներ, ափաչափ թիթեռներ, և ոչ մի մարդ:

-Ոչ ոք չկա՛, հե՜յ, հե՜յ, - վերջին հույսով բղավեցի, որից միայն թռչուններն ու արձագանքն աշխուժացան:

Անձրևը միանգամից էլ դադարել էր:

Դեռ լավ է, որ գիշատիչների չէի հանդիպել. կարծում եմ՝ գլխի էին ընկել, որ այս պատմության գլխավոր պատմիչն եմ, և ինձ չի կարելի ուտել: Իսկապես, այս ու՞ր եմ կորել, երևի անձրև չեն սիրում, բայց թռչուններ ու մժեղներ՝ ինչքան ասես: Գունագեղ թռչունները երգում են, իսկ մժեղները... հասցրեցին այնքան կծել, որ նրանց խայթոցներից անընդհատ ծափահարում էի թևերիս ու քորում: Կծած տեղերն ուռել ու բլիթ-բլիթ կարմրել էին: Այ, ինձ հետաքրքրում էին թութակները:

-Հետաքրքիր է, եթե սովորեցնեմ, կխոսե՞ն:

-Դե, իհարկե, կխոսեն, բա էլ ինչու՞ են թութակ:

-Է՜յ, թութա՜կ, - կանչում եմ՝ հետևելով այդ թևավոր չաչանակների թռիչքին ծառից-ծառ:

-Բա՜րև... - կրկին գոռում եմ, - ձայնս բարձր արձագանքում է ջունգլիներում: Թռչուններն աղմկում են՝ յուրաքանչյուրն իր ձևով: Իսկ ես, հանկարծ, որոշում եմ երգել: Այդ պահին փնտրում եմ հիշողությանս մեջ և ոչ մի երգ չեմ հիշում, բայց հոգումս սկսում է երգել կարոտի երգը, ու կամքիցս անկախ, սիրտս երգում է. «Թռչեի՜ մտքով տուն, ուր իմ մայրն էր արթուն, տեսնեի այն առու՜ն...» Աչքերիցս արցունքի կաթիլներ են ընկնում...
Թռչունները մի պահ լռում, հաջորդ պահին միանգամից գտնում են յուրաքանչյուրն իր նոտան, ու ձայնակցում երգիս: Առանձնանում են թութակների կցկտուր բառային ճչոցները, որոնք ես իմ ականջներում ու ուղեղում ձևավորում, բառ եմ դարձնում ու կրկնում.
-Բա՜րև...բա՜- րև... տու՜ն... տու՜ն...

Մեկը համարձակվում ու ավելի է մոտենում ինձ, գլխավերևումս պտտվում, պտտվում ու իր կոպիտ բաղաձայն ձայնահնչյուններով կրկնում.

-Տու՜ն... տու՜ն...

Որոշեցի գտնել ուտելի պտուղով ծառ: Եվ այդ մտքով տարված ուսումնասիրեցի մոտակա ծառերը: Ծառերից մեկի պտուղները նման էին մեր տխլենու պտուղներին: Մանր, ընկուզանման պտուղներ էին: Կարելի է ուտել: Անմիջապես որոշեցի և քաղեցի: Հիմա էլ պետք է մտածել ջարդելու մասին: Իսկ, կարելի՞ է ուտել: Իսկ եթե թունավոր լինի՞: Չէ~, քաղցած մնալն էլ մի բան չէ: Օդապարիկն էլ վերևում կախված... Եթե չիջեցնեմ, կմնամ այստեղ, ջունգլիներում: Անգամ կախարդանքս չի ստացվի թռչված վիճակում: Չվախենաք: Ես սա չեմ ասում, որ դուք մտածեք, թե կմնամ ջունգլիներում և ինչ-որ մի հովազ կամ վայրի խոզ ու վագր ինձ կուտի ավելի շուտ, քան ես կհասցնեմ ինքս որևէ բան ուտել: Պետք է փորձեմ, եթե չփորձեմ, կասեք՝ վախկոտի մեկն է: Ես այն կուտեմ, միայն մնում է ջարդել: Հետաքրքիր է, որ

այս հսկա ծառերի կողքին կան նաև այսպիսի ծառեր, դե, անտառ է՝ կասեք, իսկ այդ պտուղներն էլ ինձ կանչում էին, որ պոկեմ: Ինչ լինում է, թո՛ղ լինի: Այո՛, ես այն քաղել եմ և մնում է ջարդեմ: Նայեցի շուրջս՝ ավելի ուշադիր: Քար չէր երևում: Քայլ-քայլ առաջ գնացի. արմավենին, որը սկզբում չէի նկատել, կանգնած էր պտուղներով ծանրաբեռնված: Քիչ այն կողմ ծառի տակ ընկած կոկոս կար, որով էլ ջարդեցի իմ ձեռքի մանր ընկույզները: Մտածեցի, որ կոկոսից կուշտ եմ, մի անգամ արդեն փորձել եմ: Ինչևէ, դեռ այստեղ եմ և դեռ կհասցնեմ կոկոս էլ ուտել: Մանր ընկույզները ջարդեցի ու գցեցի բերանս: Թույլ դառնահամ ունեին. հետո՞ ինչ, այնքան էլ տհաճ չէր, ու կուլ տվեցի: Եթե հասկանայի, թե ինչ է կատարվելու, գոնե կհասցնեի հաշվել՝ մեկ, երկու, երեք...

Չհասցրեցի: Ես աճում էի: Աճում էի դեպի վեր: Ոտքերս ամուր սեղմված էին հողին: Իսկ մարմինս բարձրանում էր: Շփոթված՝ բերանիցս թափեցի ընկույզի մնացորդները, որոնք դեռ չէի հասցրել կուլ տալ, բայց անօգուտ էր. երևի հիմնական զանգվածն արդեն կուլ էի տվել: Անգամ փորձեցի ձեռքերով բռնել ինքս ինձ՝ սեղմելով գլխիս ու ուսերիս, բայց անօգուտ էր: Բարձրացա, բարձրացա և շուտով այլևս չէի տեսնում ոտքերս: Սակայն դրա փոխարեն ինձ էր մոտենում երկինքը: Իմ գլուխն արդեն մոտեցել էր այդ բարձրահասակ ծառերի կատարներին: Այդ հսկա ծառերի կատարները, որ այնքան անհասանելի էին թվում այժմ ինձ համար թփեր էին: Այ հիմա ավելի սարսափելի է, քան եթե որևէ գազանի հանդիպեի: Ախր ես ի՞նչ պետք է անեմ: Իմ այս հասակով: Ես հո նվենի չե՞մ, որ կանգնեմ այս արևադարձային անտառում և ինքս ինձանից գոհ, արևին ու անձրևին ժպտալով ապրեմ:

Մարդ եմ, չէ՞: Մինչ այդպես մտահոգ էի, գլուխս հասավ օդապարիկիս և անցավ: Ահա, այն կարող եմ իջեցնել, բայց արդեն ինձ հարկավոր չի լինի. չէ՞ որ չեմ տեղավորվի զամբյուղի մեջ: Թեև հուսահատ էի, բայց որոշեցի իջեցնել այն: Օդապարիկն իմն է, ինձ տեղափոխել է, ուրեմն ընկերոջ նման հարազատ է: Իջեցնելով ճյուղից ուսս գցեցի և քայլեցի: Այո, ուղղակի քայլեցի:

Կղզին բոլորված էր ջրով: Անծայրածիր օվկիանոսը տարածվում էր կղզուց դեպ հորիզոն և կրկին կղզուց դեպ հորիզոն, և բոլոր կողմերից հորիզոնն ասես շրջագծվում էր տարածության մեջ այնպես շրջանաձև, ինչպես կղզին: Այլևս անօգուտ էր փնտրելը: Ես վերջնականապես համոզվեցի, որ գտնվում եմ անմարդաբնակ կղզում: Ասեմ, որ հիմա քայլերս բավական մեծ էին: Մի քանի րոպեում պտտվեցի ողջ տարածքով և հասկացա ու հաստատեցի, որ այո՛, իսկապես, գտնվում եմ անմարդաբնակ կղզում: Կղզին, օվկիանոսի ջրերով շրջապատված, ապրում էր իր կյանքով և ընդհանրապես մտքով չէր անցնում, որ մի օր մեկը կգա և կուտի իր պտուղներից մեկն ու կվերափոխվի հսկայի: Իսկ գուցե գիտե՞ր. հապա էլ ինչու՞ էր աճում այդ ծառն իր պտուղներով: Կղզու կենտրոնում հսկա սար կար, որից ծուխ էր ելնում: Իհարկե, հսկա եմ ասում՝ իմ նախկին պատկերացումներով, որովհետև հիմա այն իմ հասակին էր: Եթե ծխող լիներ, կարելի էր օգտվել այդ կրակից, որը ելնում էր սարի գագաթից: Հանկարծ մտքովս անցավ, որ եթե մի հսկա կաթսա ունենայի, կդնեի սարի գագաթին և ապուր կպատրաստեի: Մտածեցի նաև, որ օվկիանոսից կբռնեի ամենահսկա ձուկն ու սարի գլխին կեփեի: Երազելը լավ է: Իսկ ես քաղցած եմ: Այն պտուղները, որոնք ինձ աճեցրել էին, ոչ թե

քաղցս հագեցրել, այլ ավելի սաստկացրել: Եվ ահա ճաշ եփելու միտքն ինձ ավելի խենթացրեց: Օդապարիկս տեղավորեցի ծառի տակ, իսկ ինքս մոլորված ու մտամոլոր, կղզու շուրջը մի քանի պտույտ անելուց հետո նստեցի:

Ափամերձ ավազներին նստած մտածում էի: Քիչ հեռու ավազի վրա դանդաղ սահում էր մի իսկա կրիա: Տեսնելով ինձ, նա չվախեցավ, այլ մոտեցավ ու... բարևեց: Աչքերս պլշած, այսինքն ապշած, նայեցի կրիային, բայց ցույց չտվեցի զարմանքս. մտածեցի Վանի մասին: Մի՞թե Վանի նման ընկեր ունեցողը կզարմանա ինչ-որ կրիայի վրա, որը նույնպես խոսում է:

-Բարև, - պատասխանեցի, - իսկ ծանր չէ՞ այդ զրահը, որ շալակած տանում եք:

-Հոգնել եմ, երբեմն մտածում եմ նրանից ազատվելու մասին, բայց միևնույն է շարունակում եմ ինձ հետ, մեջքիս տանել արդեն հարյուր տարի:

-Եթե դուք ճիշտ եք ասում, ապա կիմանաք. ինչու՞ են այստեղ ծառերը երփներանգ: Գուցե նրանց ծնու՞նդն էլ եք տեսել:

-Ավա~ղ, դրանով չեմ կարող պարծենալ: Ինքս էլ տվեցի այդ հարցը մայրիկիս: Եվ նույն պատասխանը ստացա: Ավա՜ղ...

-Ինչ-որ է, այստեղ հիասքանչ է, դժգոհելու ոչինչ չունեմ: Միայն պտուղներն էին տարօրինակ: Կերա, բայց քաղցած մնացի:

-Վայ՜, վա՜յ, ի՞նչ է, դու մտածում ես իմ ձվերն ուտելու մասի՞ն: Նրանք այնտեղ, ավազի մեջ են: Խնդրում եմ, մի՛ կեր նրանց: Տեսնում եմ՝ դու իսկա ես, նրանք քեզ չեն հագեցնի: Գնա՛, օվկիանոսում քեզ համար կեր փնտրիր:

-Ախր ինչպե՞ս կուտեմ խոսող կրիայի ձվերը: Դա հավասար է վայրենության: Մարդակերության: Չէ, ի՞նչ եմ ասում: Կրիակերության:

-Շնորհակալ եմ: Դե, ուրեմն, խնդրում եմ, ոտքդ չդնես ա~յ այն փոսի վրա, որը ծածկել եմ ավազով:

-Լավ, ուշադիր կլինեմ: Կփորձեմ կողքով քայլել:

-Շնորհակալ եմ, ես հանգիստ կլինեմ, որ ձագերիս կյանքը վտանգի մեջ չէ:

Կրիան համոզվելով, որ իր ձագերի կյանքն ապահով է, դանդաղ սահեց ավազի վրայով դեպի ջուրը: Ես հետևեցի կրիային: Մտա օվկիանոս: Հիմա արդեն վախենալու ոչինչ չունեմ: Մտածել եմ, ուրեմն կիրագործեմ: Գուցե այստեղ կարողանամ որս անել: Ահագին տեղ քայլելով մտել էի ջրի մեջ, իսկ ջուրը դեռ ծնկներիցս էր: Ոտքերիս մոտ խլվլում էին մանր ձկներ, նրանք քսվում ու լոռ էին տալիս, դրանից ոտքերս խուտուտ էին առնում: Քայլում էի զգույշ:
Որպեսզի ձուկ բռնես, պետք է չշարժվես ու լուռ լինես: Իհարկե, ես կարող էի մի քանի րոպե ինքս ինձ պահել այդ վիճակում, միայն թե հաջողացնեի ձկնորսությունս: Ափերս զգույշ իջեցրեցի ջուրն ու թիակների պես տարուբերեցի: Այդ պահին ձեռքերս

նման էին հսկա աքցան-շերեփների, որոնք պետք է աքցանեին որսը: Մի քանի անհաջող փորձից հետո բռնեցի: Այո, ձեռքերիս մեջ թպրտում էր մի հսկա ձուկ: Մոտավորապես մի քանի հարյուր կիլոգրամ կլիներ: Հիմա կասեք հնարում ես, բայց ինչու հնարեմ, եթե ահա, այդ ձուկը ձեռքերիս մեջ է: Գեղեցիկ, կապտագույն ու արծաթափայլ թեփուկներով: Դուրս եկա ափ: Օհո՜, միթե սա ես եմ բռնել, ուրախացա, և մտածեցի՝ ափսոս որ միայնակ եմ, և ոչ ոք չկա տեսնող ու ինձ ընկեր: Երանի Վանը լիներ, ախր նա էլ ձուկ շատ էր սիրում: Մեկ էլ հանկարծ գլխումս մի միտք անհանգստացած արթնացավ. իսկ եթե հանկարծ այս ձուկն էլ խոսի, այդ դեպքում այսպես քաղցած կմնամ այս անմարդաբնակ կղզում: Ձուկը հանեցի ափ: Դեռ նոր էի հիացած նայում, դեռ նոր էի որոշել մաքրել թեփուկներն ու դատարկել փորոտիքը, այդ գործողություններն անընդհատ կրկնում էի մտքումս և նաև հիանում, երբ ձուկը բաց ու խուփ արեց իր հսկա բերանն ու... Միայն հասցրեցի տեսնել նրա բերանի ճերմակ ատամները, որոնցով կարող էր ինձ հանգիստ ծամել և նաև կծել: Բայց նա շատ քաղաքավարի պահեց իրեն, ոչ միայն չկծեց, այլև... խոսեց: Այո, ես հենց դրան էլ սպասում էի:

-Այնտեղ հացի ծառն է աճում, որով կարող ես սնվել:

-Այո, - կարկամեցի ես, - շնորհակալ եմ խորհրդի համար: Կա հացի ծառ, հետևաբար մնում է պանրի ծառը, իսկ ու՞ր է պանրի ծառը, - փորձեցի կատակել ես:

Իսկ ես քիչ առաջ մտածում էի, թե ինչպես պետք է ծառից ձող պատրաստեմ բռնածս ձուկը խորովելու համար: Մտովի մաքրեցի ձկան թեփուկներն ու փորոտիքը: Հետո ինչ, որ կաթսա չունեմ: Մի բարակ ու երկար ծառ ճյուղատեցի, մաքրեցի տերևներից ու ձուկը հագցրեցի այդ ձողածառին: Այն նմանվեց խորովածի շամփուրի: Դե, մնացածն արդեն պարզ է: Մոտեցա սարին, ձուկը դրեցի սարից վեր բարձրացող կրակի վրա և սպասեցի: Հրաբուխն այնքան ուժեղ չէր, որ այրեր ձուկը: Երևում է՝ նոր էր արթնացել: Եվ կարող էր իմ ձուկը խորովել առանց այրելու: Ըստ սովորության պտտեցի մի քանի անգամ տարբեր կողմերի և ահա ձկան խորովածը պատրաստ էր: Ողջ կղզում տարածվել էր խորովածի հոտը: Լավ էր, որ կղզում վայրենիներ չկային, ապա թե ոչ, ձկան փոխարեն ինքս կլինեի խառնարանի վրա: Շա~տ համեղ էր: Եթե պատմեմ, դուք էլ կցանկանաք ուտել, իսկ ես այդ դեպքում չեմ կարող ձեզ հյուրասիրել, որովհետև կերա մինչև վերջ, ու խնջույքս ավարտվեց:
Այն, ինչ դուք հիմա կարդացիք, իսկապես միայն մտային պատկեր էր: Հեզ ու խոնարհ, այդ հսկային նորից հետ բաց թողեցի դեպի օվկիանոս: Նա պոչը թափ տվեց ու հեռացավ: Վերջ: Վերջ: Վերջ՝ երևակայությանս պատմությանը: Մնում է միայն գտնեմ հացի ծառը: Պտտվեցի կղզում: Գտա այդ հացի ծառը: Պանրի փոխարեն կոկոս պոկեցի: Եվ այդպես էլ հագեցա:
Հոգնած որոշեցի քնել: Քնեցի: Անձրևը դադարել էր: Արևից ու կրկին տեղացող անձրևից պաշտպանվելու համար ընտրեցի մի մեծ ծառ, որի տերևները հովանոցի էին նման: Քնի մեջ էլ զգում էի շրջապատի շարժումը: Տերևների խշշոցը, արդեն դադարած անձրևի կաթոցները ոչ թե երկնքից էին արդեն, այլ բարձրում գտնվող լայն տերևներից, որոնք ծանրացած իջնում էին ու իրենց պարունակությունն ափսեից թափվող ջրի նման բաց թողնում, և իհարկե, այդ դեպքում թրմփոցն ավելի ուժգին էր,

որից վեր էի թռչում՝ շուրջս վայրի գազանի փնտրելով, իսկ հետո, երբ արդեն սովորական դարձան այդ ձայները, այլևս դա էլ չէր խանգարում քնած ձևանալուս:

Անհանգստությունը եկավ այն ժամանակ, երբ հանգստացել էի, քիչ թե շատ քնել, քաղցած չէի: Ոտքի կանգեցի: Մեկ անգամ ևս քայլեցի կղզու շուրջ բոլորը: Նայելով հորիզոնին՝ հասկացա, որ միայնակ եմ: Նավ չէր երևում: Եվ արդյոք որևէ նավ կցանկանա՞ր իր վրա ունենալ ինձ նման ուղևոր: Կարծում եմ՝ ոչ: Այդ պահին էլ հասկացա, որ ամեն ինչ շատ վատ է, այո, վիճակս վատ է: Նստեցի ավազներին ու հոնգուր-հոնգուր լաց եղա: Այսպես չի լինում: Չէ՞ որ ամեն վիճակից էլ ելք կա: Ո՞րն է ելքը: Ասում են, որ երբ ելք չկա, պիտի գնաս այնտեղ, որտեղից սկսել ես: Հիշեցի հայկական հեքիաթը, որում տղայի ականջները երկարում են, երբ նա ուտում է անծանոթ պտուղը, բայց նաև, կարճանում են, երբ ուտում է կողքի ծառի պտուղը: Ճիշտ է: Չէ՞ որ ես էլ հեքիաթում եմ, նույնիսկ հայկական:

-Այո՜, այո՜, ճիշտ է: Ես պետք է գնամ սկիզբ, պետք է ուտեմ այն, ինչից սկսվեց:

Երկու քայլով հասա այն ծառաթփին, որից պոկել էի ընկույզները: Մի քանի ընկույզ քաղեցի, ապա գնացի դրանք ջարդելու: Արդեն ամեն ինչ կրկնվում էր այնպես, ինչպես եղել էր: Ավելի վատ չի կարող լինել: Միջուկն արդեն ծամելով մտածում էի. տեսնես ի՞նչ արդյունք կունենամ: Ամենաանհավանականը կլինի այն, որ կուլ տալուց հետո չփոքրանամ կամ թե ընդունեմ մի այլ կերպարանք և այդպես պարտադրված լինեմ միայնակ ապրել այս կղզում: Հետաքրքիր բան է մենությունը. երբեք չի լցվում ու լիանում: Կարող եմ նույնիսկ անվանել ու համարել ազատության յուրահատուկ ձև: Այսպես ընկել էի ազատության փիլիսոփայության մտորումների մեջ, երբ աչքերս խախտեցին իրենց տեսային կանոնավորությունը, մարմինս պտտվեց, փոխվեցին ծառերի բարձրությունները, ու՝ ես իջա... Ես իջա իմ բարձունքից, նրանք՝ ծառերը, բարձրացան...

-Օ~, հո՜, հո՜, - բացականչեցի:
Այո, չէի հասցրել զարմանալ, երբ արդեն ընդունել էի իմ նախկին հասակը: Ամեն ինչ լավ է, երբ լավ էլ վերջանում է: Առանց հապաղելու վազեցի դեպի այն ծառը, որի կողքին պահ էի տվել օդապարիկս: Բարձրացա զամբյուղ:
-Ի՜նչ լավ է...
Քանի դեռ որևէ նոր փոփոխություն տեղի չի ունեցել, արագ-արագ արտասանեցի կախարդական բառերն ու...
-Այդ ու՞ր, այդ ու՞ր, - հետևիցս կանչում էին նվենիները: Ոչ էլ հետ նայեցի, ոչ էլ վերադառնալու կամ մնալու հույս թողեցի նվենիներին: Ափսոս, կրիան կկարոտի, իսկ թութակները կկրկնեն՝ բա~րև... տու~ն... և ոչ ոք չի լսի կամ լսի էլ՝ չի հասկանա նրանց:

ՎԵՐԱԴԱՐՁ

Թող այդ ծիածանային նվենիները մնան իրենց տեղերում: Նրանք շատ գեղեցիկ են և շատ էլ գեղեցիկ ու կարևոր թուղթ են ստանում նրանցից, բայց ես այլևս չեմ ցանկանում անմարդաբնակ կղզում միայնակ քայլել: Երբ այն դարձել է երկու քայլ: Ես ցանկանում եմ հեռանալ այն կղզուց, որտեղ ոչ ոք չի ապրում, ոչ ագահ կայսրուհին, և ոչ էլ անգամ գլխիվայր կանգնած թագավորը: Շուտով կհայտնվենք ինչ-որ տեղ: Այդպես է: Երբ հեքիաթը սկսեցինք, մենք համաձայնության եկանք, որ մեր նպատակը մեկն է՝ ճամփորդելը: Լինել այն վայրերում, որոնց մասին երազել եմ, կամ թե երազել ենք, ասում եմ՝ երազել ենք, որովհետև, ես և՛ պատմում եմ, և՛ դուք ինձ հետ ճանապարհորդում եք: Մենք միասին ենք ուղևորվում երազանքի երկիր: Այդպես էլ Փարիզ չհասանք: Արդեն եղել ենք մի քանի երկրներում, անգամ այն երկրում, որի մասին բոլոր ովին չէի մտածել. գուցե այդ դու՞ք էիք երազել, և այդ ձեր երազանքն էր: Համենայնդեպս, կյանքն առջևում է: Կրկնել եմ կախարդական բառերն ու չգիտեմ, թե որտեղ կհայտնվենք: Հուսով եմ՝ կգա այն օրը, երբ օդապարիկս կճոճվի Փարիզի Աստվածամոր տաճարի կամարներից կախված: Կքայլեմ Լուվրի հնարժ սենյակների լաբիրինթոսով, ականջներումս՝ շրշյունը պալատական զգեստների, հայացքիս առջև՝ վերածննդի նկարիչների ու քանդակագործների արարումները: Դողացող մատներով կհպվեմ Ռոդենի կերտած կենդանի-մարմարե արձաններին ու կվերանամ իրականությունից...

Ինչ էլ լինի, մենք շատ հիշողություններ ունենք, և զարմանալով ինձ վրա, կարող եմ մտերիմներիս պատմել, թե ինչպես էին ձկները հարցազրույց վերցնում, և թե ինչպես բռնեցի ու չկարողացա ուտել ամենահսկա ձկներից մեկը. այն այնքան հսկա էր, որ եթե հիմա իմ առջև լիներ, ոչ կկարողանայի գրկել, ոչ բռնել, ոչ էլ անգամ ուտել: